

«ԹՂԹԵԱՅ ԶԱՒԱԿՆԵՐՈՒ ՀԱՅՐ»Ը ԹԵՈՂԻԿ

ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Թէոդիկ (1873-1928), բո՛ւն անունով Թէոդորոս Լապճինճեան¹, Հայ իրակա-
նութեան մէջ իր հռչակը ամէն բանէ վեր կը պարտի իր «թղթեայ գաւակնե-
րուն»՝ Ամէնուն Տարեցոյցը տարեգիրքերուն, եւ պիտի շարունակէ ամէն բանէ
վեր յիշատակուիլ անոնցմով: Փոքրիկ հանրագիտարաններ՝ բացուած ժամա-
նակի անցքերուն եւ անձերուն վրայ, Թէոդիկի տարեգիրքերը կը ծառայեն իր-
րեւ սկզբնաղբիւր, ուր խմբագիրին բժանդորութիւնը՝ հանդէպ Հայոց լեզուին
եւ իրողութիւններու ճշգրտութեան, կը մնայ ամէն կասկածէ հեռու:

Անոր միտքի ծնունդներն են այլ գործեր ալ, ոմանք անտիպ: Իր Յուշար-
ձան Ապրիլ Տասնրմէկի ժողովածուն (Պոլիս, 1919), որ 1985ին «Յուշարձան Ապ-
րիլ (11) Քսանրչորսի» խորագրով պիտի վերահրատարակուէր Պէյրութ, կը
մնայ առաջին լուրջ փորձը սեղմ պարունակի մը մէջ ներկայացնելու Հայ միտ-
քին եւ հոգիին կորուստը ցեղասպանութեան տարիներուն:

Հոս ներկայացուող նամակները քաղուած են տրցակէ մը, որ մեր տրամադ-
րութեան ներքեւ դրած է բարեկամ մը: Տրցակէն լոյսի բարիքին արժանանալու
համար ուրիշ առիթի մը սպասող նամակներն ալ Թէոդիկ ուղղած է Մեսրոպ
Եպսկ. Նշանեանի, բացառութեամբ երկու նամակներու, որոնց հասցէատէքն է
Կարապետ Գարիկեան:

Մեսրոպ Նշանեանի (1872-1944) պատրիարք ընտրուելէ (1939) առաջ ունե-
ցած գործունէութեան յատկանշական երեսները կ'ընդգրկեն՝ Վեհապետեան
Պատրիարքի կարգադրութեամբ 1908ին պատուոյ ուղեկցութիւնը տասներկու-
ամեայ աքսորէն Պոլիս վերադարձող Մատթէոս Իզմիրլեան Պատրիարքին,
ապա մինչեւ 1910ի վերջերը Էջմիածնի մէջ պաշտօնավարութիւնը իրրեւ գաւա-
ղանակիր եւ անձնական քարտուղար Իզմիրլեան Կաթողիկոսի (Թէոդիկ նամա-
կի մը մէջ արդէն կ'ակնարկէ թէ Նշանեան մտերիմն էր Իզմիրլեանի), իսկ Թէ-
ոդիկի հետ նամակցած տարիներուն՝ տեսչութիւնը Երուսաղէմի Պատրիարքու-
թեան տպարանին, ձեռագրաց մատենադարանին եւ դպրոցներուն, ինչպէս նա-
եւ լուսարարապետութիւնը՝ 1922էն մինչեւ պատրիարքացում:

Նշանեանի աշխատասիրութիւններէն են՝ Ժամանակագրութիւն Գրիգոր
Վարդապետի Դարանադեցւոյ գիրքը, հրատարակուած 1915ին, որուն կ'ակնար-
կէ Թէոդիկ, Երեմիա Զեյեպի Քէօմիւրճեանի Օրագրութիւնը, Երուսաղէմի Զե-
ուագիր Աստուածաշունչերու Յուցակը, «Դիւան Ս. Յակոբայ» ժողովածուները,
զանազան թարգմանութիւններ, եւն.:

Թէոդիկի նամակները կերպով մը կ'ուրուագծեն իր կեանքին գլխաւոր
երեսները՝ ըստ հոլթեան վերերեւոյժ օրուան հացը իրրեւ հաշուապահ-հաշուա-
կալ վաստակողը, Պոյսոյ Հայեվարին իր մարգարտաշար ձեռագրով կենդանու-

թիւն տուող խմբագիրը, բանահաւաքը, բառարանագիրը, աքսորականը, ցեղասպանութենէն վերապրողը, հայ որբերու խնամատարը, օրապահիկի բեռին տակ ընկճուած մտաւորականը, կեանքի ընկերուհին կորսնցուցած վշտահարը, գրասէնն ու՝ իր ընտրուածով՝ գրամոլը, եւ դեռ ուրիշ բաներ:

Բժախնդիր խմբագիրը իր կերպարանքը կը տարածէ մէկէ աւելի առիթներով: Օրինակ՝ երբ իր նամակընկալին կ'առաջարկէ աղբիւրի մը յիշատակութիւնը կատարել սաղիմահայ արուեստին անդրադարձող իր յօդուածին մէջ, կամ կ'ըսէ թէ Օրմանեան Սրբազանի անտիպ նամակը արժանի չի համարեր տպագրութեան, քանի որ գրական կամ ազգային մասնաւոր արժէք չի ներկայացներ ան (14 Ապրիլ 1926 թուակիրը):

Անցեալին հրատարակութեան տուած ենք Թէոդիկէն Վահան Թէքէեանին ուղղեալ նամակներ, որոնք իրենց ընդհանուր ոգիով սերտ աղերս մը կը յայտնարեն Քորֆուէն եւ Նիկոսիայէն Մեսրոպ Եպիսկոպոսին առաքուած նամակներուն հետ («Նամակներ՝ Բաշալեանէն, Թէոդիկէն, Կամսարականէն Եւ Զիֆթէ-Սարաֆէն», Շիրակ ամսագիր, Պէյրութ, Նոյեմբեր 1986, էջ 70-78): Հոն եւս կը տեսնենք այն տառապալի եւ դառն կեանքը, որ բաժին էր ինկած Թէոդիկի՝ քեմալական շարժման հետեւանքով աստանդական դառնալէն ետք:

Թէոդիկի քրոջորդի Շահան Շահնուր իր «Թէոդիկ» գրութեան մէջ (Սիրտէ Սիրտ, մատենաշար «Յառաջ», 1995, Փարիզ, էջ 61-66) կը հաստատէ. «Թէոդիկ ամէն բանէ առաջ խոհանոց մըն է», այդպիսով հետաքրքրական աղբիւս մը ցուցարբերելով Թէոդիկէն նամակի մը հետ, ուր ան քայլ մը աւելի առաջ անցնելով իր անձը կը ներկայացնէ իրրեւ իր խոհանոցին մատակարար, խոհարար, սպասեակ, եւն.:

Շահնուր կ'աւելցնէ. «...չունիմք սորվելիք իր գրականութենէն, իր լեզուէն, իր արուեստի ըմբռնումներէն – բայց անձէն, այո՛, եւ մեծ բան: Ան կատարեալ ու անվերապահ նուիրումի խորհրդանշանն է»:

Իրապէս ալ Թէոդիկի նամակները կը հաստատեն իր նուիրումը եւ աւելին: Անոնք մեզի կը բերեն բազմազան օրինակելի խմբագիրի գաղտնիքին՝ յարատեւ ընթերցում եւ պրպտում, ապա նաեւ նպատակասլաց հետեւողական հետապնդում:

Թէոդիկ իր 13 Մարտ 1925 թուակիրին մէջ կ'ըսէր. «...Տարեցոյցս... դժիւսմ կեանքիս լծորդուած» անոր հետ պիտի դադրի միայն» ու ... տէրը կը մնար իր խոստումին:

Այլուր, 15 Փետր. 1926 թուակիրին մէջ ան կը յայտնէր իր միտքը կրծող հոգ մը. «... օր մը սա կաւակերտ մարմինս պիտի ամփոփուի օտար հողի տակ, եւ, մէկդի՛ քարը՝ մենելոցի օրեր Հայր-Մեր մը գրուցող պիտի չունենամ...»:

Թէ Թէոդիկ Հայր-Մեր մը գրուցող ունի՞ այսօր, անձանօթ կը մնայ մեզի. բայց ան որոշապէս մխիթարական պիտի նկատէր պարագան, եթէ միտքէն անցընէր թէ գրասէրներն ու բանասէրներն իր իրապէս ամէնուն տարեցոյցները ձեռք պիտի առնեն սքանչանալով իր «փոքրիկ հանրագիտարան»ներով եւ երախտագիտութեամբ յիշելով իր անունն ու գործը:

Նամակները կը վերարտադրուին հարագատօրէն, առանց որեւէ լեզուական միջամտութեան, բացի կարգ մը կրճատումներ իրենց անկրճատ ձեւին վերածելէ:

Տեղին պիտի ըլլայ շնորհակալութիւն յայտնել դոկտ. Գրիգոր Մ. Վրդ. Մաքսուտեանի եւ Դոկտ. Արա Ղազարեանցի, որոնք սիրալոյսով յանձն առած էին Թէոդիկի տարեցոյցներէն կարգ մը տեղեկութիւններ ապահովելու տաղտուկը:

Կ. Պոլիս, 1/14 Հոկտ. 1911

Գերապատիւ Հայր Սուրբ

Շնորհակալութեամբ կը վերադարձունեմ այսօր ձեր հասցէին՝ ատենօր Ձեռն փոխ առած լուսանկարներս: Իրաւ է թէ քիչ մը ուշացուցի առաքումը, բայց ներողամիտ եղէք, որովհետեւ կարի զբաղած էի Տարեցոյցիս² գործերով, մանաւանդ անձնական մատենադարանիս կազմութեան ծանրաբեռն հոգովը:

Իս էելօք շնորհապարտ պիտի կացուցած ըլլաք եթէ հաճիք ինձ հայրայքէ 1843 եւ 1847 տարիներու պարզ օրացոյց, անշուշտ վանքին տպարանը, անկիւնէ մը լոյս աշխարհ կրնաք ածել գայնս եւ ինձ դրկել, շատ պէտք ունիմ, այսինքն թէ 1840էն սկսեալ մինչեւ 1911, 72 տարիներու օրացոյցի հաւաքածոյէս վերեւի 2 տարիները միայն կը պակսին, եւ այս իսկ պատճառաւ չեմ կրնար կոր զանոնք կազմի յանձնել: Եթէ վանքի գրադարանը 1839, 38, 37, 36 եւայլն (դէպի վար իջնող տարիներուն) օրացոյցները կան տրամադրելի, պատրաստ եմ գնել զանոնք, բաւ է որ դուք յանձն առնուք այս տաղտուկը:

Կ'ուզէի նաեւ գիտնալ թէ «Սիօն» հանդէսին³ բոլոր տարիներուն անբերի հաւաքածոյն կը գտնուի՞ հոդ՝ վաճառելի, եթէ այո, վերջին գին քանիի՞ կ'ըլլայ արդեօք՝ ինձի պէս բանասիրութեամբ զբաղող գր[ական] համեստ վաստակաւորի մը համար:

Հազար ներողութիւն տուած այս տարապարհակներուս համար: Պատրաստ եմ որեւէ կերպով փոխարինել գէթ գայն: Ձերդ յարգալիք

Թեոդիկ

Յ.Գ.— Պատկերներուն կապոցը ապահովագրեալ է. նաեւ մամսկատուն յանձնած եմ մի օրինակ կնոջս նոր երկասիրութենէն իբր դոյզն նուէր (Արդի Բարոյագիտութիւնը)⁴, թերեւս շահագրգռուիք անոր բովանդակութեամբ:

Նոյն

ԹԵՈՒԴԻԿ
THÉOTIG
C/O DER-NERSESSIAN
Djélal Bey Han, Cons/ple

Կ[ոստանդնու]լյոյիս, 5/18 Մայիս 1912

Գերապատիւ Հայր Սուրբ

Հայ տպագրութեան չորսհարիւրամեակին առթիւ պատրաստած ըլլալով բանասիրական երկ մը⁵ որ կը խօսի ատոր վրայ միայն, եկած են խնդրելու Ձեզմէ որ հաճիք *անմիջապէս* ինձ ուղարկելու ազնուութիւնն ունենալ Ս. Յակովբեան վանուց տպարանին՝ սկզբնատրութենէն մինչեւ ցարդ կատարած գործունէութիւնը: 1912ի Ձեր օրացոյցէն տեղեկացայ թէ 1837ին սկսած է ան⁶: Արդ ո՞վ եղած է դրդապատճառ, հոն *առաջին տպագրեալ գիրքը* ո՞րը եղած է: Իսկ նոյն տապարաննիդ կոխուած գրեանց ցանկն ունիւմ: Ինձ կը մնայ իմանալ սատարողք եւ ծաղկեցումողները (ինչ[պէս] Եսայի Պատր[իարք]⁷ եւն.) *թուականներով* եւ մանրամասունքով:

Երէկ առ այդ կիմս Երուսաղիմատուն այցելեց, բայց Սմբ[ատ] վրդ. Գազազեանը* չէ կրցեր գոհացնել զինք, Ձեր Գերապատուութեան անունը միայն տուեր է, իբրեւ լաւագոյն աղբիւր՝ ուզուած տեղեկութիւնները քաղելու համար: Կը յուսամ որ յանուն Հայ Բանասիրութեան եւ Ձեր վանուց տպարանին փառաբանութեան՝ կը հաճիք նկատի առնել տոյն խնդրանքս *խկոյն*, քանզի զիրքիս տպագրութեան սկսուած է մէկ կողմէն: Օրմանեան Ս[րբազան]⁹ եւս Ձեզ պիտի գրէ այս մասին, խնդրելով որ փութացնէք գործադրութիւնը խնդրանքիս. նաեւ Գազազեան Հայր Սուրբը:

Ձերդ յարգալիք

Թեոդիկ

ԹԵՈՒԴԻԿ
THÉOTIG
C/O DER-NERSESSIAN
Djélal Bey Han, Cons/ple

Կ[ոստանդնու]լյոյիս, 18 Ապրիլ 1913

Գերապատիւ

Մեսրոպ Վրդայտ. Նշանեան

Երուսաղէմ

Երէկ ստացայ 6 Ապր[իլ] թուակիրնիդ եւ այսօր կ'ուղարկեմ Ձեզ «Տիպ ու Տառ»էս¹⁰ օրինակ մը՝ յանձնարարեալ ծրարով: Կը խնդրեմ որ զայն նուէր *ընդունիք*: Թէեւ հրատարակչներս 500 օրինակ միայն տպագրած են այս գիրքէս եւ չափազանց ժլատ կ'երեւին նուէր ուղարկելու մասին, բայց յաջողեցայ խօսքս քալեցնել եւ հատ մը Ձեզ համար ստանալ, մանաւանդ որ աշխա-

տակցութեան բաժին մըն ալ ունիք՝ Ձեր տպարանին մասին բաւական տեղեկութիւններ ուղարկած ըլլալով ինձ:

«Անշուշտ իմացած էք թէ կազմելու վրայ եմ 3 տարիէ հետէ հետիտել աշխատութեամբ՝ բանասիրական հայկական] երկասիրութեանց մատենադարան մը, հետզհետէ գրական պարապմանցս համար իբր գործիք ու առաջնորդ: Շնորհակալ եմ Ձեր վանքէն որ Դանիէլ Սրբազանի բարեացակամութեամբ ինձ նուիրեց «Սիօն»ի հաւաքածոն: Ջերմապէս կը փափաքիմ ունենալ հետեւեալ գիրքերն ալ՝ Ձեր տպարանէն ատենօք լոյս ընծայեալ. Մատթոս Ուռհայեցի¹¹: ժամանակագրութիւն Միխայէլ Պատր[իարք]ի¹²: Պատմ[ութիւն] Հայոց (Յովհ[աննէս] Կաթողիկոս)¹³: Պատմ[ութիւն] Թաթարաց¹⁴: Ստորագրութիւն] Երուսաղէմի¹⁵: Վահրամ Վրդպտ. (Օծումն Լեւոն Գ.ի)¹⁶: Տանվիյ (Տեղագր[ութիւն] Երուս[աղէմի])¹⁷: Պատմ[ութիւն] Ս. Գրոց (Տնտեսան)¹⁸: Ս[ուրբ] Յակոբ նամ 2 [իբր] առաքեալարն նագլի (Տէրոյեց)¹⁹: Քերական(ներ) եւ հեգերէն(ներ):

Գիտեմ թէ այս գիրքերուն արժէքին համագումարը բաւական շատ է: Արդեօք վանքին Տեսչութեան բացառապէս բարեխօսելով կարելի՞ է իրենց զինէն կարեւոր գեղջ մը ընել ինձ նման հայ բանասէրի մը համար որ հարուստ մը չէ: Գիտեմ որ եթէ յօժարիք կրնաք զլուխ հանել այս գործը որ ստուգիւ տարապարիակ մըն է իմ կողմէ Ձեզ առթուած: Հաճեցէք զայնս ծրարել եւ բօսքիմ²⁰ յանձնել իմ հասցէովս եւ գիտցունել ինձ *ամենամեղքին* զինը (համագումար), որպէս զի *իսկոյն ուղարկել փութամ ձեզ*. Եթէ մէկ քանին սպառած են կամ շատ հազուագիւտ օրինակներ կը գտնուին, բարի կամեցողութեամբ մը կը յուսամ թէ կրնաք դարձեալ հայրայթել զայնս եւս: Սպասելով անձկազին՝ արդիւնքին, կը մնամ Ձերդ յարգալիք

Թէոդիկ

Յ.Գ.- «Տիպ ու Տառ» հակառակ ժամանակին ծանուցումը ըլլալուն թէ հրատարակուեցաւ, Չատկին խթման օրը միայն հրապարակ ելաւ:

Նոյն

ԹԷՈՂԻԿ

THÉOTIG

C/O DER-NERSESSIAN

Djélal Bey Han, Cons/ple

Կ[ոստանդնու]յալիս, 13/26 Մայիս 1913

Սիրելի Հայր Սուրբ

Ստացայ նամակնիդ: «Տիպ ու Տառ»իս համար Ձեր շուայած ներքողի տողերուն համար խորին շնորհակալութիւն. գործէն հասկցող մարդիկ երբ այսպէս ազնիւ վերաբերումներ կ'ունենան, կը կարծեմ թէ յոգնութիւններս առած կ'ըլլամ բոլորովին: Շնորհակալութիւն նաեւ Ձեր ուղարկած գիրքերուն համար գորս ա՛յնքան վեհանձնօրէն յօժարեք էիք *նուիրել* մատենադարանիս:

Միայն թէ Միխայիլ Ասորի Պատրիարքին գրէն 14րդ ֆորման՝ պակաս էր. յանհունս շնորհապարտ պիտի կացուցանէք զիս՝ եթէ բարի ըլլայիք այդ ֆորման²¹ ընդ փոյթ ինձ դրկել:

Յառաջիկայ 1914 տարւոյ Ամենուն Տարեցոյցը բոլոր տարուաններէն աւելի շքեղ կերպարանելու համար քանի մը ամիսէ յի վեր աշխատելու ետեւէ եմք այր ու կին. այս տարի ուրիշ աշխատութիւն չունենալուս՝ բոլորովին նուիրուած եմք անոր: Ողջ ըլլան եկեղեցականներ եւ գրչի եղբայրներ որոնք ա՛յնքան ազնիւ գտնուեցան ինձ տրամադրելու ընդօրինակութիւններ հին շահեկան ձեռագիրներէ, հնութեանց պատկերներ, նշանատուր) ազգայնոց մասակներ, եւն.: Վենետիկէն ալ ստացայ սիրոյ *հիանալի տաղ մը*²² անտիպ՝ հին ձեռագիրէ մը արտագրուած: Կու գամ աղաչել Ձեզ, որ եթէ կարելի է, անգամ մը պրպտէիք Ձեր համբաւեալ մատենադարանը, եւ ընտրելով ձեռագիր տաղարանէ մը գրական տեսակետով ուշագրաւ էջեր մը, հաճէիք ընդօրինակել եւ ինձ յղել, ծանօթագրութիւններով (թէ որո՞ւն գրածն է, քանիի՞ն գրուած, եւն.): Դարձեալ եթէ առձեռն պատրաստ կան հող նշանատուր) հնութեանց եւ անձանց լուսանկարներ, *ուղարկէիք ինձ փոխ*. պէտքս հոգալէս վերջ կրկին Ձեզ կը վերադարձնեմ: Աւելորդ կը նկատեմ աւելի խօսիլ այս մասին. Ձեր բարեացականութիւնը եւ կիրք ճաշակը փափաքածէս աւելի պիտի կրնամ գոհացում տալ հնութեանց սիրահար պահանջքիս:

Երեկ Կիրակի, Վիեննացի վարդապետի մը հետ (որ քաջ լուսանկարիչ է)²³ գացիմք դեգերիլ Շիշլիի հայոց հողվարքը,²⁴ ջոջ ազգայիններու դամբարաններ լուսանկարելու համար: Ատոնց կարգէն էր նորոգ կառուցեալ տարաբախտ Տիգրան Երէնճեանիներ²⁵ գոր կը յարգէինք ա՛յնքան շատ եւ որուն հետ ա՛յնքան լաւ մտերմութիւն մըն ալ ունեցած էք: Եթէ իրմէ ունիք նամակ մը կամ նամակներ գր[ական] եւ ազգ[ային] խնդրոց տեսակետով շահեկան դրուագներով, կարելի՞ էր արդեօք յուսալ որ ձեր յարմար դատած մասերը կ'ընդօրինակէք, տարեցոյցիս մէջ տրուելու համար՝ իր հոյակապ դամբարանին *քիշի*²⁶ ստորոտը: Չէ՞ք խորհիր որ նորութիւն մը կ'ըլլայ այս բանը, կարծես անդրշիրիմէն եկող ձայներ մը ա՛յն անձին որ մեծապայծառ իմացականութիւն մըն էր, յաւետ երկրպագու Արդարութեան:

Սպասելով անհամբեր Ձեր պատասխանին եւ յայտնելով շնորհակալութիւններս կանխիկ, կը մնամ Ձերոյ յար յարգալիք

Թէոդիկ

ԹԵՈԴԻԿ

THÉOTIG

C/O IMPR. HOVAGHIMIAN

SUNBULLI HAN, CONS/PLE

Կ. Պոլիս, 2/15 Հոկտ. 1913

Միտելի Հայր Սուրբ,

Ինչպէս նամակագրուիտէս պիտի հասկնաք, հասցէս փոխուած է այլ եւս: Տէր-Ներսէսեան²⁷ տպարանի հրկիզումով, 1914ի Տարեցոյցիս տպագրիչ ու

հրատարակիչ ունեցայ Տիար Յովակիմը²⁸։ Քիչ օրէն բախտը պիտի ունենամ նոր Տարեցոյցս Ձեզ յղելու, (ղեպ 'ի Հոկտ.ի վերջ), նախորդներէն շքեղ տպագրութեամբ եւ ճոխ պարունակութեամբ։ Ներփակ ձեզ կը վերադարձունեմ Լեւոն Ե.ի ձեռագրին լուսանկարը²⁹ եւ կը փութամ կրկնել շնորհակալութիւնս։ Բնագրին ընթերցումը կատարելով կարելի եղածին չափ ամբողջ, շարել տուած եմ այդ գոյգ էջերուն հետ, կցելով նաեւ Ձեր նամակէն մեկնողական հատուածներ՝ Ձեր անունով։

«Ասկէ առաջ, քանի մը գիրքերու խնդրանքս նկատի առած ատեննիդ, անշուշտ բնաւ չանցուցիք միտորնող թէ օր մը կրկին կրնամ համարձակիլ՝ նմանօրինակ խնդրանք մըն ալ ներկայացնել Ձեզ, Ձեր ազնուութենէն ... քաջալերուած։ Պարզ խօսիմ, իմ ունենալ փափաքածս է հիմայ Նար-Պէյի³⁰ «Բնար Պանդխտին»ը գոր ձեռք ձգելու համար գրավաճառ չքողուցի հոս, եւ միշտ յուսավրեպ ելայ։ Երեւակայեցէք, այդ անման քերթող սրբազանին լոյս ընծայած բոլոր գործերն ունիմ, բաց ի «Բնար Պանդխտին»էն։ *Շատ մօտէն տեղեակ* մէկ բարեկանս ըսաւ թէ այդ գիրքէն մատենադարանիդ [մէջ] կայ եղեր *մէկէ անկի օրինակ*։ Խնդրանքներուս ՎԵՐՋԻՆԸ նկատեցէք ներկայս եւ հաճեցէք գոհացում տալ bibliomane³¹ մայրոյ լոյճանքիս. վստահ եղէք որ բնաւ չպիտի մոռնամ Ձեր բարեացական վերաբերմունքը։ Կանխամատոյց շնորհակալեօք եւ սպասմամբ Ձեր պատասխանին, կը մնամ Ձերոյ յարգալիք

Թէոդիկ

THEOTIG
C/O IMPR. HOVAGHIMIAN
SUNBULLI HAN, CONS/PLE

Կ. Պոլիս, 22 Հոկտ. 1913

Սիրելի Հայր Սուրբ

Շնորհակալութեամբ ստացայ նուէր-օրացոյցնիդ, (թէւ օր մը առաջ Գլրճեան գրատունը տեսնելով զայն՝ իսկոյն գնած էի եւ գիշերը կարդացած ամբողջովին Ձեր ուսումնասիրութիւնը)։

Այսպէս, կանխեցիք զիս՝ տարեկան նուէրի մէջ։ Գալ շաբթու, այսինքն 7/8 օրէն առիթը պիտի ունենամ ես ալ նոյնը կրկնելու Ձեզ, ուղարկելով «Ամէնուն Տարեցոյցը»իս 1914 տարուան հատորս, գոր կը կարծեմ թէ բաւական խնամով պատրաստել յաջողեցայ։

Անակնկալ մը առթած ըլլալու համար Ձեզ, *այլեւայլքի* բաժնիս մէջ՝ այսօր իսկ գետեղեցի «Շահեկան Օրացոյց» մը խորագրով մէկ էջնոց յօդուած մը որ Ձեր «Յատելուած»ն ունի իրեն նիւթ, Ձեր «Ակնարկ»ին վրայ ձգուած «ակնարկ» մը պարզապէս, դրուատալից տողերով որոնք կը վերջանան նոյնիսկ ռէկլամով³², որուն արժանի է արդէն Ձեր ուսումնասիրութիւնը³³։

Գալով «ԲՆԱՐ ՊԱՆԴԽՏԻՆ» գիրքին գոր նախորդ նամակաւս խնդրած էի Ձեր Գերապատուութենէն՝ կարելին ընելու, հայթայթելու եւ ուղարկելու

համար ինձ, կը կրկնեմ խնդրանքս՝ *առելի սաստկագոյն քափով* մը որուն համար կը յուսամ թէ ներողամիտ կ'ըլլաք, երբ միտք բերեք թէ ... bibliomaneի մը հետ է գործերնիդ: Չոհողութիւն մը լրած պիտի ըլլաք պարզապէս քանի մը ժամ խորելով եւ փնտռելով այդ գիրքը, զոր ուրչափ շուտ յոէք, այնքան շուտ փրկած կ'ըլլաք զիս անձկութենէ:՝ Տիգր[ան] Սաւալանեանցի³⁴ պատկերը (փոխ) եւ լիակատար կենսագրութիւնը կը հաճի՞ք արդեօք տրամադրել ... 1915ի տարեցոյցիս համար: Չերդ յար յարգալիր

Թէոդիկ

[Բացիկ]

Միքելի Հայր Սուրբ, 9/12 Յնվր. թուակիր քարտերնիդ նոր ստացայ դեռ, ուղարկած գիրքերնուդ հետ: Կը փութամ շնորհակալութիւնս յայտնել Տարեցոյցիս մասին Ձեր գնահատականին համար, մանաւանդ Դարանաղցի³⁵ «Ժամանակագրութեան» համար, որուն մէջ պիտի թարթափիմ 'ի մօտոյ, անմիջապէս որ կազմատունէն ստանամ զայն, նաեւ պիտի խօսիմ 1916ի հատորիս մէջ՝ անոր մասին³⁶: Կը մաղթեմ Ձեզ կար եւ կորով՝ նոր երկերու 'ի յոյս ածումին համար:՝ Եթէ ինձմով կը հետաքրքրուիք, քանի մը ամսէ 'ի վեր գրչի աշխատանքի մը՝ Պրն. Չիթունիի³⁷ հետ գործի սկսած ենք հայերէն] մայր քառարանի մը պատրաստութեան համար. գիշեր ցորեկ կը տքնինք կոր: Եթէ ինչ ինչ թելադրութիւններ ունիք այս առթիւ, շնորհակալ կ'ըլլանք զայնս լսելով: Ամէն անոնքոր առաւել կամ նուազ չափով օգտակար ըլլան մեզ, պիտի յիշատակուին Յառաջաբանին մէջ: Եթէ Օրմ[անեան] սրբազանը հոս ըլլար, շատ պիտի օգտուէինք իրմէ. հաղորդէիք իրեն, խնդրեմ, այս տողերը: Քիչ ատենէն ալ արդէն պիտի ստանաք պաշտօնական նամակ մը երկուքնուս կողմէ՝ այս խնդրոյն մասին: Օրմ[անեան] Ս[րբազան]ի բաւական ատեն առաջ նամակ մը յղելով, խնդրեր էի որ ինձ շնորհ ընէր հայքայթելու 1895ին հող տարած Թ[աղէոս] Վրդ. Ա[ստուա]ծատ[ու]րեանի³⁸ «Համաբարբառ Հին եւ Նոր Կտակարանաց»ը. չպատասխանեց: *Վերջին* խնդրանքս նկատեցէք ասիկա եւ բարի եղէք օրինակ մը ուղարկել ինձ, ապահովեալ: Բօսթին ծախքը պատրաստ եմ հատուցանելու:՝ Չերդ կանխիկ շնորհակալեօք եւ յարգանքօք

Թէոդիկ

(1915 Փետր. 14/27)

Կ. Պօլիս, 24 Փետր. 1922

Գերապատիւ Հայր Սուրբ,

17 Դեկտեմ. 1921 թուակիր Ձեր պատուականը ձեռքս հասաւ տարօրինակապէս յուզումնալից այս օրելուն՝ երբ կեանքիս ու գրական պարապմանցս ամխոնջ ընկերուիւնս մահուան բօքը կը հեռագրուէր ինձ Չուիցերիայէն³⁹, եւ Ձեր սրտագին տողերը՝ կեանքի ունայնութեան մօրմուտին վրայ բացուած կոկոսներու պէս՝ կը թուէին դրասանգել աշխարհի ստութիւնը. «*Լիակատար*

ապարհնում եւ քաջողջ ու գուարք վերադարձ ի հայրենիս»: Կ'սփոփում, հաւատ ունելով որ սիրելիի մը երկրաժեշտը՝ տեսակ մը վերադարձ է ... 'ի հայրենիս գուարքնոց: Իր ցեղին ազատութիւնը երագող իր հոգին այլ եւս պիտի չտանջուի՝ մահկանացուներու դիւանագիտութեան դժխեմ խաղերէն, եւ հողանիւք շինուածքը բօրափած՝ պիտի արփաթել հոն՝ Հայաշխարհի համար ինկող իր ազգակիցներուն հետ: Արցունքներուս մէջէն՝ այս հաւատքովը կ'ապրիմ, սպասելով այն երանաւտ օրուան ուր ե'ս ալ պիտի ողջունեմ իմ լուսաբնակ Պէադրիչէս⁴⁰, աստեճականի քոյրս՝ անդէճականի հրեշտակս դարձած, մտեղէն սրտիս արիւնը՝ հոն ոսկեղէն սկիւի մէջ գիւնի փոխարկուած, աշքիս բիրը՝ հոն աստեղակերպ պաղպաջուն, կեանքիս երբեմնի լոբուստը՝ հոն վուփու եւ ալէու, աշխարհային նանիր իղձս՝ հոն շնորհ ու տեսլական...:

Հայր Սուրբ, Գլխադիրին⁴¹ առջեւ, անմահ պատարագի ատեն, հեղ մը գոնէ յիշէիք այդ չարչարուած Հայուհին որ աշխարհաւեր ամբողջին մէջ բէւ բողբէ լսպտեր՝ կախուած մնաց պատնէշի վրայ, մէջի մատիկ մը մոմին հետ իր կողերն ալ բռնկցնելով, իր տմոյն ցոլքէն թիզ մը հեռուն ալ արծակելով, իրմէ աւելի թշուառ խորհելով միշտ, մանաւանդ աղօթելով, 'ի ննջել եւ 'ի յառնել, արքայքի ճամբաներուն վրայ բոլոր դեգերողներուս համար...:

Սգաւոր Ձեր բարեկամը

Թեոդիկ

Յ.Գ.- Գրիգոր Շղթայակիրի⁴² նամակներէն այն երկուքը՝ զորս շահեկան դատած էր Ձեր կիրք ճաշակը՝ ընդօրինակուած երբ ստանամ, շատ ուրախ պիտի ըլլամ: Ապրիք որ գոնէ ուշ ուշ կը յիշէք զիս, մանաւանդ կ'ուզէք օգտակար ըլլալ 29 տարեցոյցներուս արագ սպառմամբ: Կար ու եռանդ վանական հոգերով եւ որբերու գործերով անխոնջ դատողիդ:

Նոյն

Կ. Պոլիս, 29 Ապր. 1922

Սիրելիդ իմ Հայր Սուրբ,

Ամսոյս 2 թուակիր նամակնիւ շաբաթ մը 'ի վեր ծոցս պահած ունիմ եւ ա՛յլ համրանքը չեմ գիտեր թէ քանի՞ցս հանեցի զայն իր թաքստոցէն՝ վայելելու համար անձնիւր դուր Ձեր հոգերուիս գրուածքին: Ապրիք որ դառնացած սիրտերու կը մատչիք այսպէս գորովագին, փորձելով օծել զայնս այն անանուն սպեղանիով որուն գաղտնիքը կ'երեւի թէ Ձեզ նման իրենց կոյումին արժանի վեղարի մարդիկը գիտեն: Պատարագնիդ արցունք խլեց աչքերէս, եւ երեւակայութեամբ ապրեցայ այն պահը, Գլխադիրին առաջ ծնրադիր, խունկի բուրումներէն գինով, կերտներու լոյսերէն հոգիս բռնկած...:

Հիախանդ համբուրի Ձեր Ս. Ազոյն, եմ միշտ խոնարհ

Թեոդիկ

Ամենապատիւին⁴³ Աջը կ'առնեմ եւ կը խնդրեմ որ յիշեցնէք իրեն դրկելիք քերթումը: Տարեցոյցս մօտ է տպագրուելու: Ծիտիկս ծուռ թող չձգէ, արդէն շա՛տ ծռած է ան: Չեր դրկելիքն ալ չէր ուշացներ անշուշտ: Անհուն շնորհակալութիւն դրկած Չեր չէքին համար:

Ս. Պատր[ի]արք Հայրը նոր լուսանկար համաձ չունի՞ արդեօք, իր պատկառելի գլխով, մագերն ու մօրուքը՝ ձիւնափառ, ամբողջութեամբ՝ վեհափառ...: Եթէ յիշեցնէք իրեն, չի մերժեր զիս, օրինակ մը կը խաւրէ:

Նոյն

Կասթուրի (Գօրֆու), 16 Դեկտ. 1922

Սիրելի Հայր Սուրբ,

Անակնկալ դիպումով մը, հալածուած միլլիական⁴⁴ սարսափէն, հապճեալ մեկնեցանք Պօլսոյ ջուրերէն, եւ եօթնօրեայ տաժանագին ծովագնացութենէ մը վերջ եկանք հաստատուիլ առժամապէս յունական այս հեռաւոր կղզիին Կասթուրի կոչուած գիւղը, որուն քովը կը գտնուի երբեմնի աշխարհասասան վեհապետին՝ Վիլիէլմ Բ.ի պալատը⁴⁵. – բնակարան այժմ՝ մեզի ուղեկցող 1600 հայ որբերու: Ազգ[ային] Խնամատարութեան⁴⁶ կողմէ մեզի պաշտօն տրուած էր իբր ուսուցիչ ընկերանալ անոնց, որոնք, ստուար մեծամասնութեամբ չափահաս եւ արհեստաւոր, անուղղայ եւ անուպայ տարր մը կը ներկայացնեն, դաստիարակուելու գլխովին անբնդունակ: Այս պայմաններուն մէջ, դիւրին է Չեր Գերապատութեան՝ երեւակայել թէ մեզ մման հայրենագորկ եւ ընտանեգորկ անձերու համար որքան դառն է համակերպիլ եւ գործել այս տեսակ անհանդուրժելի միջավայրի մը մէջ: Մենք ի բնէ խաղաղ եւ համբերատար աշխատութեան մարդիկ, սիրով պիտի լծուէինք աւելի ծանր աշխատութեանց, եթէ մեր արժէքը քիչ շատ գնահատող միջավայրի մը մէջ գտնուէինք: Դժբախտաբար մեր գլուխն ունինք տղայամիտ եւ անփորձ «Ռ-լիֆ»ի⁴⁷ ամերիկացի պաշտօնեաներ, գորկ կազմակերպական ոգիէ եւ գործ մը վարելու կարողութենէ, որով խաղալիք դարձած ենք անոնց քմայքին, եւ այս պայմաններուն մէջ մեր հոս կայքը կրկին տառապանք մը պիտի դառնայ մեզ համար:

Արդ, մենք կը մտածենք ժամ առաջ հեռանալ այս անհրապոյր եւ հիւրամերժ փերէն եւ նետուիլ տե՛ղ մը՝ ուր մեր նախասիրութեանց համաձայն կարենանք նուիրուիլ աշխատութեանց եւ դրապէս օգտակար ըլլալ ո՛չ միայն մեր անձին, այլեւ մեր շրջապատին:

Այս կարգի վայրերէն մին ահա՛ կը նկատենք Երուսաղէմի վանքը՝ որուն գլուխը կը գտնուի հիմա իր բազմահմտութեամբն անգուգական մեր հայրենակից հովուապետը:⁴⁸ Ուրախ ենք որ ասկէ առաջ երբ տակաւին Պօլիս էինք եւ մեկնելու հեռապատկերը մեր աչքին առաջքն ունէինք, մեր ըղձամքին ընդ առաջ երթալով՝ Գազագեան Վրդ.ի քերնով, շնորհ գտած էր Նորին Ամենա-

պատուութեան մօտ մեր քաղաքդ հաստատուելու գաղափարը, որուն գործադրելիութեան արձագանգը եղած էիք Ձեր վերջին նամակաւ, որուն Պօլսէն պատասխանելու ժամանակը պակսեցաւ մեզ: Այդ նամակին մէջ կը թելադրէիք մեզ՝ Պէյրութ անցնիլ, ուրկէ մեր Պաղեստին մուտքը դիւրացնել կը խոստանայիք: Բախտն այնպէս բերաւ որ այս ոչ-քշմամի երկրին մէկ ափն իյնանք, երկուքս ալ անջատաբար՝ ի ձեռին ունենալով յունական անցագիրներ՝ յունական որեւէ ցամաքի համար: Արդ, քախսանձագին կը խնդրենք որ հաճիք Ձեր ազդու բարեխօսութեամբն ամէնուս սիրելի Դուրեան Ս. Պատրիարք Հօր՝ ստանալ մեր Պաղեստին մտնելու արտօնութիւնը, եւ տեղոյդ անգլ[իական] իշխանութեան միջոցաւ ընդ փոյք հրահանգել տալ Գորֆուի անգլ[իացի] հիւպատոսը, մեր անցագիրները viser ընելու⁴⁹ համար: (Արշակին⁵⁰ անցագրին կցուած է իր մետասանամեայ որդին Սիմոնն ալ): Մենք վստահ ենք որ բարի կամեցողութեամբ մը այդ հրահանգումն ալ կը դիւրանայ, երբ զմեզ ներկայացնէք վանքին վարժարանին համար անհրաժեշտ ուսուցիչներ:

Սիրելի Հայր Սուրբ, նկատի առէք որ այդ ազնիւ ժեսքով⁵¹ վերջ տուած պիտի ըլլաք մեր տխուր պանդխտութեան որ աւելի դառն է քան աղետալի տարիներու արքորքը: Կը մնանք շնորհապարտ զգացումներով Ձերդ միշտ անկեղծ,

Թեոդիկ Լապճինճեան
Արշակ Ալպօյաճեան

Հաւցէնիս. — Théotig, Poste Restante, Corfou (Grèce)

Théotig, Poste Restante
Corfou (Grèce)

Գորֆու, 22 Յնվր. 1923

Գերապատիւ Հայր Սուրբ,

Ամսոյս 2 թուակիր Ձեր պատուականը երէկ ստացայ դեռ, որուն կը փութամ պատասխանել: Նախ շնորհակալութիւն իմ տաղտուկա հայրաքար յանձանձեղնող եւ խնդրանքնիս մասամբ գործադրել յաջողելնող համար: Ընկերօջս՝ Ա[րշակ] Ալպօյաճեանի հաղորդեցի եղած կարգադրութիւնը իր Եգիպտոս անցնելուն մասին, եւ ինք ալ պէտք եղածը փութաց գրել Պրն. Չագրիի⁵²: Երկուքնիս ալ ստիպուած ենք համակերպիլ մեր ճակատագրին, սպասելով միշտ յաւագոյն օրերու: Անշուշտ բանտի եւ արքորի տարիներու տաժանելի կեանքէն անհունապէս գերիվեր է ապրիլ կէս-վանական մթնոլորտի մը մէջ եւ վայելել հովանին Ն[որին] Ամենապատուութեան, որ այնքան կարեկից է լուռ պարապմանց սիրահար իր հայրենակիցին՝ քախտէն այնքան ապտակուած եւ իր կեանքի աշունին նետուած այս ակամայ նժդեհութեան մէջ: Իմ մասիս եղած կարգադրութիւնը կ'ընդունիմ ատենի մը համար, մինչեւ որ «քացուին դռներ յուսոյ»⁵³ եւ հալածանքը դադրի հայ

մտաւորականներու դէմ, հայ բշտաբաններ դու առնէ մի քիչ եւ Ս. Յակովբայ վանուց պիտոճեն թողատու ըլլայ անթոշակ չծգելու գրչի համեստ աշխատատու մը: Հաճեցէք բարգման հանդիսանալ իմ շնորհապարտ զգացմանցս՝ Նորին Ամենապատուութեան մօտ եւ ըսել իմ կողմէս, թէ մահու ճանապարհը տարիներ առաջ քալող եւ վիշտերուն վիշտը անմոռնջ կրող Թէոդիկը պատրաստ է իր չարչարուած գլուխը հանգչեցնել վանական խցիկի մը քարին իսկ վրայ, բաւ է որ իր շուրջն ունենայ հայատրոփ սրտեր եւ բարեմոյն դէմքեր, ինչպէս եւ գիրքեր ու թուղթեր: Ձերդ յար յարգալիք

Թէոդիկ

[Բացիկ]

Գործու, 31 Դեկտ. 1924

Սիրելի Ս. Մեսրոպ Եպսկ. Նշանեան
Երուսաղէմ

Եպիսկոպոսանալու առթիւ Պիրեոն⁵⁴ հասնելնուդ՝ նամակ մըն էիք որկած ինձի. չէի կրնար պատասխանել՝ ուղեւորութեան մէջ ըլլալնուդ համար: Մեղք որ Ելլադայի⁵⁵ ափերը եկաք, առանց Յոնիականի⁵⁶ մեր դրախտագեղ կղզին այցելելու: Կը շնորհաւորեմ սրտանց Ձեր եպիսկոպոսացումը, ամանորի սեմէն մաղթելով Ձեզ քաջողջ կեանք եւ փառքի նոր տիտղոսներ:— 32 տարեցոյց որկած եմ մեր Գաբիկեանին,⁵⁷ 4ր նուէր, մնացեալ 28 հատը դարձեալ Ձեր բարեացական ջանքերով կը յուսամ թէ կ'սպառնան, որպէս զի հնարաւոր ըլլայ ինձ ժամ առաջ բեթեմալ Վիեննա ունեցած ծանրածանր պարտքերէս:⁵⁸— Խրիմեան Հայրիկի նամակը⁵⁹ պիտի դնեմ 1926ի հատորիս մէջ՝ որ պիտի բոլորէ իր *20ամեակը*. տեսնենք Ձեզմէ ի՞նչ կ'ունենան: Կանխամատոյց շնորհակալեօք, կը մնամ Ձեր Սրբազնութեան յար անայլայլ սիրով՝

Թէոդիկ

Théotig, Poste Restante
Corfou (Grèce)

Գործու, 13 Մարտ 1925

Սիրելի Սրբազան Հայր,

Հաճոյքով ստացայ 24 Փետր. բուակիր նամակնիդ եւ անոր ծոցը գտայ Ձեր եպիսկոպոսութեան յաջող լուսանկարնիդ: Պիտի դնեմ զայն 1926ի հատորիս մէջ. միայն թէ բարի ըլլայիք ինձ փութացնել Ձեր լիակատար կենսագրութիւնը, որպէսզի դնելիք պատկերիս արժէքը շեշտուէր: Գիտէք թէ վաղուց ՚ի վեր համակիր մըն եմ Ձեզի, իբրեւ լուրջ, ներում եւ պարտաճանաչ եկեղեցականի մը. եւ յետոյ Ձեր անունը յիշողութեանս մէջ կը գուգորդի միշտ երջանկայիշատակ Իզմիրլեան⁶⁰ հայրիկին՝ որ իմ մանկութիւնս է ճանչցած եւ դուք ալ վայելած անոր մտերմութիւնը երկար տարիներ, մինչեւ զինքը գերեզման իջեցնելնիդ: Ամենաշահեկան գրութիւնը՝ զոր կը յիշեմ կարդացած

րլլալ Ձեր գրչեն, բաց ի Սաղիմական մամուլի պատմութենէն,⁶¹ է ինձ համար օրագրութիւննիդ պատերազմի տարիներուն գրուած եւ հրատարակուած Ս. Գաբամաճեանի տարեցոյցին մէջ:⁶² Իմս դեռ արժանի չեղաւ այդպիսի ուշագրաւ գրութիւն մը ձեռնէ հիւրընկալելու իր էջերում: 1926ս պիտի բոլորէ իր *քսանամեակը*, եւ ես կարելիս ընելու ետեւէ եմ, զայն ոչ միայն շքեղ եւ ճոխ, այլ սովորական տարիներուն 1½ պատիկ ծաւալովը լոյս ընծայելու համար, մանաւանդ որ հիմա մրցող ունիւմ ամենաութեք⁶³: Ուստի անակնկալ մը առթած պիտի րլլաք ինձի, եթէ Ձեր յիշողութենէն դուրս բերէք անցեալէն լաւագոյն դրուագ մը տարեցոյցիս ի սպաս, կամ, ձեռագիր մատենադարանն ուղ փոշիներուն տակ ծուարած գեղեցիկ հնութիւն մը: Գաբիկեան մը ունէի հող. աստուած շատ տեսաւ՝ առաւ ձեռքէս. Ռ՛րբան կը սիրէինք զիրար, եւ Ռ՛րբան գաղափարակից էր ինձի որպէս բանահաւաք-բանասէր: Յանձին Սրբազնութեանդ կ'ողջունեմ հանգուցեալը. մի՛ մոռնաք ինէ անկի տարեցոյցս որ դժխեմ կեանքիս լծորդուած՝ անոր հետ պիտի դադրի միայն: Իմ հող անցնիլս կ'երեւի թէ դեռ շատ ջուր պիտի վերցնէ, մինչեւ որ իմին ալ ... ջուրիս քաշուիլը. ողջութիւն րլլայ: Ս. Պատրիարք Հօր եւ Բաբգէն Ս[րբազան]ի⁶⁴ բարի տրամադրութիւնները չեն բաւեր եղեր միայն: Տպարանիդ դեռ եւս անկազմակերպ վիճակը գիտնալուս, կը ջանամ իմ իւղովս տապկուիլ դեռ, չարժանանալով 20րդ տարիս հոնկէ շարելու: Թերեւս 21րդ տարիս արժանանայ այդ բախտին: Ամիսէ մը անվրէպ կ'սկսիմ տպագրութեանը, հաւանօրէն ՎԵՆԵՏ[իԱ], քանզի ՎԻԵՆՆԱՅԻՔ հոգիս հանեցին եւ զիս գէնի ալ ենթարկեցին՝ իբրեւ երկրպագու «ամառք մամոնայ»ին: Չեմ *յուսահատիր* սակայն. կեանքիս բառարանէն ջնջած եմ վաղուց ընդգծած բայս, քանզի եթէ այդպէս ըլլած չրլլայի, ա՛յսքան ցականքներէ եւ բախտէս կրած լախտի հարուածներէն վերջ չէի մնար ողջ: Իմացայ որ ԱՆՍԱՀՈՒՆԻ⁶⁵ անուն ուսուցիչ մըն ալ մեռեր է հող. կը հաճի՞ք մահուան թուականը միայն հաղորդել ինձ, մահագրութեանս մէջ անցընելու համար, համառօտ կենսագրութիւնը քաղեցի հոս մեր Տէր Եղիշէ քահանայ Գասպարեանէն (նախկին Օհանիկ սաներնիդ՝ ի Ժառանգաւորաց Վարժարանի): Նոյնիմ պատկերն ալ կրնա՞ք հայրայրել արդեօք. տարիներ հայ մանկտուոյն համար դատող կրթ[ական] վաստակաւոր մը գոնէ իր թուրքէ մահարձանն ունեցած րլլայ: Ողբացեալ Գաբիկեանի համար յայտնած Ձեր ցաւակցութեան համար խորապէս զգածուած եմ. չգտնուա՞ծ տղայ էր. բառ առ բառ պիտի դնեմ մահագրութեանս մէջ իր յիշատակին եւ արժանիքին նուիրուած տողերնիդ. ցաւակցական զիրս՝ ուղղուած իր վշտակիւր այրիին՝ կը հաճի՞ք յանձնել: Գալով տարեցոյցներուս հաշուոյն, սիրտս հանգստացաւ՝ Ձեռնէ եւ քիչ առաջ Բաբգէն Ս[րբազան]է իմանալով որ հաճեր էք եղբայրօրէն ստանձնել այդ հոգը. շնորհապարտ պիտի բողոք զիս՝ եթէ Ձեր կարելին ընէիք, որպէս զի *սակարաթիւ օրինակներ միայն մնային ձեռնորնիդ*: Գրած թիւերնիդ ճիշդ է. 32 – 4 = 28: Յոպալէ⁶⁶ եւ այլուր բազմաթիւ ծանօթներ ունիք. չէի՞ք կրնար հոն ալ դրկել, սատարած րլլալու համար գրչի աշխատատեղի մը որ իր գաղթականի կեանքը կապած է անոր հասոյթին: Մախտւածներուն փոխարժէքը, առ հաշիւ րլլալով, եթէ

փութացնէք ինձ, շատ գոհ կը մնամ, ֆր[անց]ի հաշուով. դեռ կը հեծեն պարտքի տակ. ճաշին հաշին ալ կը կցէք անոր: Հագար ներողութիւն բոլոր այս տարապարհակներուս համար: Խօսք մըն ալ, ու վերջացնեն: Քանի մը շաբաթ առաջ հոս մեռաւ սկիւտարցի կարգուկ երիտասարդ մը Գրիգոր Մինանեան, քարակոբ, եղբայր՝ Ռամկէ (?)՝⁶⁷ դեղագործ Մինանեանի եւ եղերաբախտ Փրօֆ. Անդր[անիկ] Կարապետեանի՝⁶⁸ այրիին որ հոսկէ Իտալիա մեկնած էր. մահէն վերջ եղբորմէն նպաստ եկաւ, բայց ըրբօմանտ՝⁶⁹ նամակը ետ դարձաւ. գրեթէ անօրի մեռաւ խեղճը: Յարմար կը տեսնէ՞ք այդ դեղագործ եղբորը լուր մը տալը. հանգուցելոյն գոյքերը կառավարութիւնը գրաւեց. արդէն մեծ բան մըն ալ չէին: Ձերոյ միշտ անայլալ սիրով՝

Թեոդիկ

Ս. Պատրիարք Հայրը միշտ կը տեսնէք. ըսէք թէ ամիսէ մը գրքիս տպագրութիւնը կ'սկսի, եւ ես կ'ըղծամ իրմով բանալ նորէն հատորս:

Théotig, Poste Restante
Corfou (Grèce)

Գործու, 11 Ապրիլ 1925

Գերաշնորհ
Տ. Մեսրոպ Եպսկ. Նշանեան
Երուսաղէմ

Կը հաստատեն Մարտ 13 թուակիրս, որով կարեւորը հաղորդած էի Ձեր Սրբազնութեան:

Ա. Մուրատեանը՝⁷⁰ 4-5 օրէ ի վեր հոս է, եւ օր չըլլար որ Միջմաքերդի վանական խուցս չայցելէ: Վառվռուն, շենշող եւ յարաշարժ երիտասարդ մըն է. մեր կայանի «թիփ»երը ուսումնասիրելու ետեւէ է՝ եկածէն ի վեր: Շատ ախորժեցաւ մեր կղզիէն. միտք ունի 2-3 ամիս կենալ: Շատ անգամ Երուսաղէմի յիշատակները կը քրքրէ ինձի, երախտագէտի զգացումները չկրնալով գսպել՝ Ձեզի հանդէպ. «եօրս պէս կը սիրեն զինքը-կ'ըսէ, չես գիտեր, Թեոդիկ, ի՛նչ մարդ է, անուշ, բարի եւ մանաւանդ ազնուական»: Եւ այս խօսքերը կ'ըսէ մէկու՝ մը որ աւելի շատ կը ճանչնայ զՁեզ: Ուստի իր «անուշ, բարի եւ ազնուական» ածականներուն շարունակութիւնը ընել ինձ վիճակեցաւ. «... եւ անձնուէր»: Ու տեսնելու էիք իր դէմքի արտայայտութիւնը՝ արտաբերած ածականս լսելէն վերջ զայն հաստատած ատեն: Ո՛րչափ հպարտ կ'զգամ ինքզինքս՝ Ձեր բարեկամութիւնը վայելելուս, նոյնքան կը հպարտանայ հայու հոգիս՝ երբ գաւառի գաւակ մը երկրէ երկիր կը շրջի այսպէս, հայութեան համբաւին զարկ տալով իր «բասթէլ»ով՝⁷¹ ու վրձինով: Նոյնքան յաճախադէպ է Ձեր վրայօք խօսիլը որբանոցի պաշտօնակիցներէս Տ. Եղիշէ Բահանայ Գասպարեանի, երբեմնի աշակերտ «Ժառանգաւորաց»ի, որ Ձենէ պահած է անուշ յիշատակներ:

°. Ներփակ պիտի գտնէք Բարգէն Ս[րբազան Կիլիկեան]ի ուղղեալ մէկ նամակս, նաեւ Ա. Մուրատեանի նամակը՝ Չեզի ուղղեալ: Չեր Սրբազնութենէն՝ ի դիմաց Թէոդիկի՝ խնդրուածն է արտահանութիւնը Ալվազովսքիի⁷² մէկ նկարին որ դահլիճներուդ մէջ կախուած է եղեր: Լուսանկարիչ Մերունեանը անշուշտ չի մերժեր այս յոգնութիւնը, երբ Չեր Սրբազնութիւնն ըլլայ իրեն ըսողը. եւ յետոյ իր անունն ալ անպայման պիտի դնեմ նոյն պատկերին տակ ի Տարեցոյցի իմում: Միայն թէ դժուար ալ հսկէիք, որ *անքերի եւ յաջող քաշէր* այդ իղաներկին պատկերը, որով պիտի շքատրուած ըլլայ տարեցոյցիս գեղար[ուեստական] բաժինը՝ միշտ Չեր շնորհիւր: Այդ քաշելիքէն մէկ օրինակ միայն բարի կ'ըլլաք ինձ դրկել *շուտով*, զի տարեցոյցս կը տպուի կոր անդին՝ մէկ կողմէն, իմա՝ ՎԵՆԵՏԻԱ[ԻԿ]:

°° Աս մէկ խնդրանք: Երկարորէն ալ՝ ինձ համար պիտուի՝ դիւրին է Չեզ համար ալ: Լուսահոգի Կ[արապետ] Գաբիկեանը քանի մը տարի առաջ Չեր ձեռագիրներու մատենադարանէն ընդօրինակած ու ինձ դրկած էր տասնեակ մը տաղեր, որոնցմէ միոյն խորագիրն է «*Խում ինչ ջատագով զվարժապետաց* տաղ Ը.»⁷³: Պոյսոյ տունէս բերել տուի հրատարակելի ձեռագիրներուս դէզը, եւ երբ այս տաղը կարդացի, մտադրեցի անպայման դնել Տարեցոյցիս մէջ: Չեզմէ խնդրանքս է ուրեմն՝ նայիլ եւ ըսել թէ նոյն ձեռագիր տաղարանին հեղինակը, կամ, այս խորագրով գրուած տաղը ո՞ր գրիչին գործն է: Անշուշտ Կ. Գաբիկեան քանի մը տարի առաջ գրած նամակին մէջ յիշած էր հեղինակը, բայց նամակը գտնելը դժուար է:

Անձկագին սպասմամբ Չեր պատասխանին, կը մնամ
Չերդ անալլայլ սիրով

Թէոդիկ

Théotig, Poste Restante
Corfou (Grèce)

Գործու, 21 Ապրիլ 1925

Ամենասիրելի Սրբազան Հայր,

Քրիստոս Յարեալ ի Մեռելոց: Չեմ գիտեր թէ ո՞րքան կը վայելէ փերիշան դարիքի⁷⁴ մը շրթանց՝ երջանիկ մահկանացուներու շրթանց վայել այս սրբազնասուրբ բանաձեր:

Երբորդ օրն է, մեզ, քերքիրացոցս համար, Չատկուան տօնին. ու ես այս հանդիսաւոր օրերուն մէջ՝ Միջնաբերդի խցիկս քաշուած՝ գլուխ կախ՝ անդով կ'աշխատիմ, քանզի Ս. Ղազարու տպարանի տեսուչ Հ[այր] Յակոբոս Վրդ. Բոսպորյրզեան «ձեռագիր» կը ստույ ինձի: Այսքան քնատութեան ու դատանքի տոկամ՝ հրա՛շք իրաւ որ:

Ստացայ հաճոյքով Մարտ 31 քուակիրնիդ, ներփակ գտնելով 445 ֆր[անք]ի չէք մը՝ իբր փոխարժէք ծախուած 16 տարեցոյցներուն եւ ճառերուն: Խորին շնորհակալութիւն:

1=°. Աղանմունի Ակրտիչ⁷⁵ Ս[րբազան]ի ո՛վ տուեր է տարեցոյց մը նուէր, խելքս չհասաւ: Ո՛չ աշխատակիցս է, եւ ո՛չ ալ բարի գտնուած է մեր Լ.[որտ] Ս[էյրրզ] Ֆրնտի⁷⁶ անգլ[իացի] տնօրէնին նամակին՝ իմ մասիս տուած պատասխանը գրած ատեն, «Թէոդիկի համար գործ չկայ յերուսաղէմ» ըսելով, այն օրերուն երբ Բաբգէն Ս[րբազան] Ամերիկայէն կը գրէր ինձ. «Պատրաստուէ՛, Երուսաղէմ պիտի տանիմ գրեզ»: Ուստի կը խնդրեմ որ 30 ֆր[անք] փոխարժէքը գանձուէր յիշեալէն: Իմ արիւնս կը վազէ կոր արդէն՝ 32 տարեցոյցէս 16 միայն գանձելով՝ եւ «անյայտ»ներուն ու «անվաճառ»ներուն համար սիրտս կուտրելով: Սիրելի Սրբազան Հայր, այս տողերը չլլա՛յ որ գանձատի ձեւ բան մը նկատէք, այլ վերագրէիք միայն իմ սրտնեղութեանս՝ զոր պարզելով մտերիմի մը՝ ինքզինքս մասամբ սփոփած կ'զգամ կարծես:

2=°: Կը խնդրեմ որ Ձեր քով անվաճառ գտնուած *հին եւ նոր տարեցոյցներս* (1926ը 3ական միւսները 4ական) ամուր քուղթով եւ առասանով ծրարներու վերածել տալով՝ ուղարկէիք (registered եւ printed) տղուս հասցէին որ ահա՛. —

Mr. V. Theotig, c/o Karagheusian Esq.,
259 Fifth Ave. New York, N.Y. (U.S.A.)

Ինչ որ ծախսէք նոյն ծրարներուն համար, պատրաստ եմ իսկոյն փութացնել Ձեզ փոխարժէքը փոքրիկ չէքով մը: Եղաւ ըլլալիքը, թող վնասս կատարեալ ըլլայ: Ահագի՛ն Պաղեստինի մէջ 16 հատ միայն տարեցոյց սպառելը կործանումը եղաւ Թէոդիկի, որ *բոլի*⁷⁷ համար ահագին վճարեց ի Վիեննա, Աւստր[իական] թղթատարութեան սակագինին 50% բարձրացման հետեւանօք:

3=°: Այրի Տիկ. Գաբիկեանի կարելի՞ է արդեօք լուր մը ընել որ չուշանար դրկելիքները ինձ փութացնել:

4=°: Անմահունիի քանի մը տողոնոց կենսագրութիւնը կը հաճի՞ք հաղորդել ինձ: «Մահագրութեան»ս համար է:

5=°: Ա՛լ խորհած չունիմ հող գալուս մասին: Իրենց գիտնալիք բանն է: «Իս ուզողին գերին եմ...» եւն. արեւել[եան] առածը չի՛ մոռցուիր ասանկ պարագաներու:

6=°: «Էթէ ժամանակս ներէ, կ'աշխատիմ բան մը պատրաստել 1926ի տարեցոյցիդ համար»ով կ'աւարտէիք նամակնիդ: Ահա՛ սիրտկոտրումս բուժող պարագայ մը: Այո՛, Սրբազան Հայր, տարեցոյցիս *քսանամեակին* պէտք է որ ձեր «հովիւ»ի «արմաղան»ը ընծայաբերէք, եթէ չէք ուզեր ծուռ ձգել ճիտիկը Թէոդիկին, որ իր բախտէն շա՛տ ապտակուած է արդէն: Կը բանամ այս առթիւ 20 Մարտ 1924 թուակիր նամակնիդ՝ սա տողերնիդ յուշելու համար Ձեզ. «Ձեր յանձնարարած գործն անթերի ընելու համար կը կարօտի բաւական պրպտումներու, մանաւանդ որ ամբողջութեամբ կարելի չէ կազմել Ե[րուսաղ]էմի պատրիարքական շղթան. անկէ բաւական օղակներ կը պակսին, եթէ ուզենք երկնցնել զայն օսմ[անեան] տիրապետութենէն առաջ»: Ահա՛ ուզածս. քանի մը օղակներու պակասով ալ գոհացող եմ, բաւ է որ կամահաճ գտնուիք այս ուշագրաւ շղթան յօրինելու եւ իբր մանեակ մարգարտեայ՝

կախելու քսանամենի Տիկին Տարեցոյցիս ճիտն ի վար: Կանխիկ շնորհակալութիւն:

7⁰⁰. Նկարիչ Ա. Մուրատեան Ս. Տեղեաց պատկերներէն (իր քաշած) մի քանին նուիրեց Տարեցոյցիս համար. — ա) պզտիկ ծանօթութիւն մը տուէք Բեքլեհէմի վանուց մասին.⁷⁸ ինչեա՞ն է Վարազայ վանուց երբեմնի վանահայր ծերունագարդ Սահակ Վրդ. ինչեա՞ն է տեսուչ Խորէն Վրդ.:⁷⁹ բ) Նոյնպէս պզտիկ ծանօթութիւն մը տայիք ԴԱԻԹԻ ԲԵՐԴԻՆ⁸⁰ եւ ՅՈՎՍԷՓԻ ԱՂԲԻԻԲԻՆ⁸¹ մասին:

— Աւարտեցի խնդրանքներս. իս «ժողդողիկ» չէք ձգեր (հէք Գաբիկեանիս սիրած բառովը): Տ. Եղիշէ Գասպարեանը տեսնելուս կը հաղորդեմ Ձեր Յ[ետ] Գ[րութեան]-ը: — Դուրեան Արք.ի մամակս յամձնուէր իրեն: Քերթուած դրկեց ինձ, մէկի տեղ՝ 3⁸²: Ողջ ըլլաք բոլորդ ալ:

Ձերդ խոնարհ ծ[առայ]

Թեոդիկ

Կը հաստատեմ Ապր. 11 թուակիրս:

Գործիւ, 23 Մեպտ. 1925

Գերաշնորհ

Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան

Երուսաղէմ

Օգոստ. 12 թուակիր] մամակնիդ շնորհակալութեամբ ստացած եմ, հանդերձ Այվագովսկիի պատկերով՝ գոր 1927իս մէջ պիտի կարենամ դնել, «գեղար[ուեստական]» բաժնիս փակման բերմամբ: Թէ ինչո՞ւ ուշ կը պատասխանեմ եւ ասանկ անճոռնի գիրով կը գրեմ սոյն թղթիկը, Բարգէն Սրբազան թող բարի ըլլայ պատճառը պարզել Ձեզ: — Ուրախ պիտի ըլլայի եթէ 7 տարեցոյցներս ըրքօմանտ⁸³ հաճէիք յղել զաւկիս (վրան printed⁸⁴ գրել չմոռնալով) եւ ծախուած տարեցոյցին փոխարժէքը յատկացնելով առաքման ծախուց: — Ձեր «տէլի օղան»ը⁸⁵ հոս ո՛չ մէկ վարկ ունի հայոց մօտ: Իմ, Յովհ[աննէս] Ասպետի⁸⁶ ու Յակոբ Օշականի⁸⁷ յորդորք ապարդիւն մնացին: Իր ծակաչք, խենէշ եւ «առաւ-փախաւ»եան նկարագրով ամենուս աչքէն ինկած է: Մե՛ղք իր նկարչի անժխտելի կարողութեան. անպատճառ երակ մը կայ մէջը Մուսմէտէն՝ որուն մօտ 4 տարի է ապրեր...⁸⁸: Ձեր աղօթքին կարօտ՝

Թեոդիկ

Théotig, B.P. 295

Nicosia (Cyprus)

Նիզոսիա, 12.1. [1926]⁸⁹

Սիրելիդ իմ Սրբազան Հայր,

Ամսոյս 4 թուակիր մամակնիդ հոս ստացայ, բազմօրեայ փոթորկալից ծովագնացութենէս վերջ եւ ախորժով կարդացի մանաւանդ այն բանկազին

գնահատութիւնը՝ զոր հաճեր էիք յայտնել նոր Տարեցոյցիս բովանդակութեանը մասին: Մեզիպէսները որոնք աւելի *խտայիտ*⁹⁰ են քան նիւթապաշտ՝ լիովին վարձատրուած կ'զգան ինքզինքնին, երբ ձեզիպէսները կը լսեն քաջալերիչ խօսքեր: Ամբողջ տարուան մը յոգնութիւնն առնել տուիք ինձի՝ կարմրադրոշմ Ձեր երկու բառերով: Եւ որպէս զի բարոյական կորովովս սպառագէն՝ ասպարէզ իջնեմ կրկին 'ի պատրաստութիւն 1927ի հատորիս, պիտի խնդրէի Ձեր Սիրելիութենէն՝ ձերովսանն սատարել Ձեր պատուաբեր աշխատակցութեամբ: Բանի՛ տարիէ ի վեր ստորագրութիւննիդ չ'երեւիր Տարեցոյցիս մէջ: Եթէ Ձեր գլուխին ցաւը անհանգիստ չընէ զՁեզ վերստին, - որուն համար սրտանց աղօթող եմ, - բարի եղէք շահեկան նիւթ մը որոճալու այժմէն եւ մինչեւ զարուն ամոր կերպ ու կերպարան տալով ինձ փութացնելու: Ամենահարուստ Ձեր մատենադարանին Ձեռնագրանից մէջ արդեօ՛ք որքան զմայելի գանձեր կան արտագրելիք եւ լուսանկարելիք՝ Ձեր կիրք ճաշակաւ, ի զարդ տարեցոյցիս: Հէք Գաբիկեանիս ո՞վ լուսագոյն փոխանորդ՝ Ձենէ գատ: - Հայրիկի անտիպ նամակին համար այժմէն ընդունեցէք իմ սրտագին շնորհակալութիւններս. կարելի՞ է արդեօք յաջորդ քղբատարով ունենալ զայն: Նմանեցայ տղու մը՝ որուն շաքար կը խոստանան ու ... կ'ուշացնեն: Շնորհակալութիւն նաեւ օրացոյցին եւ 2 լուսանկարներուն համար: Շատ յարմար պիտի ըլլար դնել Հայրիկի նամակին մէջ *Կարասպետ Եզեանցի*⁹¹ պատկերն ալ. արդեօք կարելի՞ էր հող ճարել եւ փոխ ինձ ուղարկել զայն: - Ուրախ եղայ նաեւ իմանալով որ տարեցոյցներս (3 հատը նուրբ էին ձեզի, Բարգէն [Կիւլտերեան] Ս[րբազան]ի եւ Ամեն[ապատիւ] Ս[րբազան] Պատր[իարք] Հօր) ձեռքէ կրցեր էք հանել: Շնորհապարտ բողած կ'ըլլաք զիս, եթէ ատոնց փոխարժէքին համար չէք մը գնէք անգլ[իական] ոսկիի՝ Լոնտոն հատուցանելի՝ եւ ինձ փութացնէիք, իյնալով ընդի[անուր] գումարէն այն ծախքը զոր պիտի ընէք 1925ի 7 տարեցոյցներս զակիս դրկելու առթիւ: Այո, լուսագոյն է զայնս ուղարկել Ն[իւ] Եօրք:

Ահա՛ իր հասցէն. - V. Theotig

c/o Karagheusian Esq.

295 Fifth Ave.

New York, N. Y.

(U.S.A.)

Հազա՛ր ներողութիւն՝ Ձեզ առթած ձանձրոյթներու համար, իբր թէ անգրադ մէկն ըլլայիք: - Կրնայի՞ք ինձ ըսել թէ Այվազովսքիի նկարը (որուն reproduction⁹² ստացայ) ի՞նչ տեսարան կը ներկայացնէ, այսինքն քիչէին տակ ի՞նչ գրել յարմար է՝ իբր նոյն իղաներկին որակական կամ բացատրական: - Բարեւներս Տիար Կ. Նուրեանի՝ որ 3 տարիէ հետէ մոռցած է Տեղեկատու Դիւանը յաճախ իրեն հետ սուրճ խմող ու կատակող բարեկամը:

Ամանորի սրտանց բարեմաղթութեանցս կ'ընկերացնեմ իմ կարօտագին բարեւներս ու կը պագնեմ Ձեր Ս. Աջը հիախանդ:

Ձերդ խոնարհ

Թեոդիկ

Theotig, B.P. 295
Nicosia (Cyprus)

Նիգոսիա, 15 Փետր. 1926

Սիրելի Սրբազան Հայր,

Ի ձեռնիմ ունիմ 6 Փետր. բուսկիր նամակնիդ՝ ներփակ 8-19-3 չէքին հետ։ Հին եւ նոր հաշուոց կարգադրութիւննիդ կատարելապէս ճիշդ է. խորին շնորհակալութիւն։ Տարիներէ ի վեր Ձեր ինձ հանդէպ շատ համակիր վերաբերումը ոչ այնքան արժանիքիս վերագրելի է, որքան Ձեր սիրոյն առ Հայ Գրականութիւն, որուն մէկ համեստ մշակն ըլլալս մեծ պատիւ մըն է ինձ համար։ *Համական* կեանքը չեմ ապրած՝ բառին դասական իմաստով. թէի իմ կենցաղս շատ հեռի չէ անոր հաւասարել, այն օրէն որ Աստուած ուզեց ամուսնականս ընդհատել եւ իս նետել դէպ ի մենութիւն։ Իմ եւ Ձեր միջեւ տարբերութիւնը մեծ չէ. դուք անգուժատ կը բուրէք, իսկ ես բորբոս սուփերաց. դուք զԱստուածածին կը բարեբանէք, իսկ ես զԱնահիտն ոսկիամայր⁹¹։ Եթէ տրուէր ինձ տասնամեակ մըն ալ բարդել կէս դարու կեանքիս վրայ, թերեւս աւելի հասուն գործեր կարենայի երեսան բերել։ Ափսո՛ս որ նոր միջավայրս հեռի է զիս գոհացնելէ. Գործիւն աւելի մեծ ամայութիւն մը շուրջպատած է զիս. պրպտող միտք մը ո՛րքան յուսախաբ կ'ըլլայ ու կը տառապի ալ՝ երբ մատենադարանէ գուրկ է եւ գաղափարակիցներ ալ չունի իր մօտ։ Երեսնամեայ հաշուակալական կեանքս գոր քաշքշեր էի Սթանայօլ՝ ճակատագրուած է եղեր որ շարունակուի. եւ ես ցորեկուան թիւերէս վերջ՝ պարտաւոր եմ մխրճիլ նորէն տարեցոյցիս պատրաստութեան գործին մէջ, յոգնած գլուխով եւ քունի ժամերու զեղչումով։ Համակերպութիւն. արդէն ի՞նչ է եղած վերջացող տասնամեակի կեանքս, այսքան գոլումներէ ու գրկանքներէ վերջ։ Բայց ի՞նչ հարկ այսքան մանրամասնութեանց. ամօք չէ՞ միթէ ուխտեալ աշխատատրիս՝ դժգոհիլ ներկայէն, երբ անցեալն աւելի մռայլ էր եղած, եւ մինչ ա՛յնքան ստուարաթիւ ազգակիցներ կը շարունակեն քարշ տալ իրենց մրգուզ գոյութիւնն օտար հողիզոններու տակ։ Մտմտութս հոն է, Սրբազան Հայր, որ օր մը սա կառկերտ մարմինս պիտի ամփոփուի օտար հողի տակ, եւ, մէկդի՝ քարը՝ մեռելոցի օրեր Հայր-Մեր մը գրուցող պիտի չունենամ ի վայրի դալարութեան անդ ուր բնակեցոյց զիս նժդեհութիւն իմ դժնեայ։

.. Հայրիկի անտիպ նամակն ընթերցայ մեծ հաճոյքով. մտադիր եմ գրողին եւ ստացողին պատկերներն ալ դնել միասին. Եզեանցինը փնտռելու ետեւէ եմ։ Եթէ վանքդ ունի Հայրիկի մէկ տարբեր լուսանկարը, *փոխ* տրամադրէիք զայն ինձ այժմէն։ Ռուսերէն գրքին համար գրեցի այսօր Ա[րշակ] Ալպօյաճեանի, որ ինձ հաղորդէ կարեւոր բացատրականը լրացուցիչ⁹⁴։

.. «Գիշերային տեսարան» Խրիմի մէկ ծովեզերքը՝ Այվազովսքիի նկարն ալ գալ տարի պիտի դնեմ. եթէ այս վերնագիր-բացատրականը չհաղորդէիք ինձ հերոսնէ, ոչինչ պիտի հասկցուէր պատկերին անդրաշուքներն։

.. Ուրախ եմ իմանալով որ տպարաննիդ գէշ աղէկ կը հոլովի Ս. Յակովբեանց կամարներուն տակ։ Զարժանացա՛յ դեռ անոր նախընծայ

պտուղէն (դրուագներ Յիսուս Մանուկի Կեանքէն)⁹⁵ ճաշակել:– Հաճոյքով կրնամ ներկայացնել Ձեր տպարանին համար որպէս գրաշարապետ՝ ՄԿՐՏԻՉ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, իր «արհեստին մէջ քաջահմուտ եւ խղճամխտ», մոմով փնտռուելիք մարդ. 10 երես շարէ՝ 10 սխալ չի սպրդեցներ, եւ արագաշարժ ալ է: 12 տարիէ ի վեր գրաշարապետն է Մ[ելքոն] Յովակիմեանի տպարանին՝ ի Պոլիս: Յովակիմեանի աչքին լուսն է. եւ դժուար թէ կարելի ըլլայ խել զինք Յովակիմեանի ձեռքէն: Ես թելադրած չըլլամ Ձեզի: Հիմա սապէս եթէ շարժիք, յուսամ՝ կ'աջողիք. – Սմբատ Եպսկ. թող իր մօտ կանչէ զինք եւ *գաղտնաբար* խօսի Մկր. Նահապետեանի, իր նոր պաշտօնին մասին յերուսաղէմ: Եթէ զինք կարենաք ըստ կարի գոհացնել, չեմ յուսար որ մերժէ: Անգամ մըն ալ կրկնեմ առանց չափազանցութեան, թէ *ամբողջ ներկայ հայ գրաշարական աշխարհին մէջ այս մարդը մէկ հատիկ է*, լոկկ մնջիկ աշխատող, ծանր գլուխ եւ վարպետ: Ունի կին մը միայն, եւ կը բնակի Հասքէոյ⁹⁶: Անդոհի օրերուն երբ կը հեռանայի Պոլսոյ ջուրերէն, իմացուցի իրեն թէ, եթէ Երուսաղէմ երբամ ու զինք կանչեմ՝ կուգա՞յ. այո՛ պատասխանեց. չգիտեմ թէ այժմու տրամադրութիւնն ի՞նչ է: Խնդիրը կը կայանայ Սմբատ Եպսկ.ի սրտագին հրաւերին վրայ, ներկայացնելով Պաղեստինը որպէս ազատ երկիր եւն., եւն.: Մնացեալը՝ ձեր գիտնալիք բանը:

.. Երբ մահեր պատահին հող, Յոպայէ եւն. հաճէիք հաղորդել ինձ, որ անցընեմ մահագրութեանս մէջ:

.. Օրմանեան Ս[րբազան]է 2 պատկեր դրկած էիք ինձ, մին Աղեքսանդրիոյ ծովեզերքը՝ նաւուն վրայ քաշուած Պ[օղոս] Նուպարի⁹⁷ հետ: Ի՞նչ լաւ կ'ըլլար, եթէ կարենայիք ձեռք ձգել երջանկայիշատակ Պատրիարքէն յիշատակի թուրք մը՝ որ քիչ շատ ազգային կամ գրական արժէք ներկայացնէ, նոյն պատկերին հետ դրուելու համար գալ տարուան հատորիս մէջ:

.. Ներփակ քարդը որ «Միջնադարեան հայ խճանկար»ի նմոյշ մըն է, ատենօք լուսահողի Գաբիկեանը խաւրած էր ինձի որ դնեմ: Պիտի դնեմ, բայց բարի ըլլայիք բացատրական մը կցել անոր, ո՞ր կը գտնուի ներկայիս, ո՞ր պատր կամ գետինը կը զարդարէ, լայնք ու երկայնք ո՞րքան են եւ ի՞նչ գոյներով խճանկարուած՝ շրջանակը, թոչունք ու ողկոյզք. վերելի հայերէնը Գաբիկեան գրած է նոյն քարդին ետին՝ լուսանցքին վրայ: *Նորէն ինձ վերադարձնէիք զայն*:– Ահա շարք մը ձանձրոյթներու, որոնց իւրաքանչիւրը պիտի հաճիք տանիլ անշուշտ ի սէր ... գրքիս *փարդախութեան*⁹⁸, որուն համար մաղբասաց էիք եղած: Կանխապայտ շնորհակալեօք, կը մնամ Ձերդ խոնարհ՝

Թէոդիկ

Théotig, B.P. 295

Nicosia (Cyprus)

Նիկոսիա, 14 Ապր. 1926

Միքելի Սրբազան Հայր,

Ի ձեռին ունիմ ամսոյս 5 թուակիր նամակնիդ, իսկ գրասեղանիս վրայ՝ այն անմման հայոճ պատկերը նրբանկար, որ կոչուած է տարեցոյցիս զարդը

կազմելու: Գեղարուեստէ հասկցող պաշտօնակիցներս թելադրեցին ինձ՝ ատով յօրինել 1927ի հատորիս շապիկը, յարեմման գոյներով: Մտածեցի շատ, եւ համոզում գոյացուցի որ իսկապէս չքնադ բան մը պիտի ըլլայ ան, թէն «դրիգուլոտ»⁹⁹ կաղապարում ըլլալուն՝ մեծածախս. այնպէս որ անիկա ոչ միայն կողքի գարդ պիտի ծառայէ, եւ այլ ձեր յօդուածին մէջ¹⁰⁰ hors texte¹⁰¹ (*կրտ*¹⁰² բողբի վրայ անջատակի): Ձեզի ի՞նչ բառերով շնորհակալ ըլլամ այս գեղեցիկ անակնկալին համար՝ կը վարանիմ կը մնամ: Բաւական տարիէ ի վեր տարեցոյցներս գրկուած էին Ձեր գրութենէն. *աճիճ*¹⁰³ հանեցիք, Սրբազան Հայր, շա՛տ ապրիք: Ձեր երկար լուրսնէն գէշ հետեւութիւն ալ հաներ էի, վախճալով որ նորէն Ձեր անտանելի անգարին ենթարկուած ըլլայիք. յապաղումը բարեբախտաբար Ձեր յօդուածին պատրաստութեան վերագրելի է եղեր. ուրախ եմ անշուշտ այդպէս ըլլալուն: Եւ որովհետեւ գրողը դուք էք, հարկ կը մնա՞ր Ն[որին] Ամենապատուութեան դատաստանն ալ լսելու՝ յօդուածնուդ հրատարակութեան համար: Ռ՛րքան համեստ էք Ձեր կատարելութեանը մէջ իսկ: Ոչ թէ դիտողութիւն, այլ պարզ թելադրութիւն մը միայն՝ իմ կողմէ: Յիշելու էք որ 1922ի հատորիս մէջ (էջ 221-24) նախնեաց խճանկարի արուեստին վրայ հայեացք մըն էի ձգեր անստորագիր. ատոր կը յաջորդէր (էջ 224-228) *Հայ-Պատմական Ակնարկ Մը* խորագրով յօդուած մը՝ երուսաղէմացիէ մը¹⁰⁴: Արդ, ձեր աղբիւրներու բոլորմին շարքին՝ անպատշա՞՞ռ էր արդեօք վերոյիշեալին ալ յիշատակումը, բանի որ միեւնոյն տարեցոյցին մէջ էր որ պիտի երեւէր Ձերը: Դարձեալ Ձեր գիտնալիք բանը: Ինէ խոնարհաբայ՝ թելադրութիւն մը միայն: Գալով Օրմ[անեան] Ս[րբազան]ի գրաբառ նամակին, բովանդակութիւնը ոչինչ կը ներկայացնէր՝ իբր գր[ական] պատառիկ: Անշուշտ լաւագոյնը չգտնուելուն՝ ատոր կայանք էիք տուած: Ներփակ կը վերադարձնէմ Ձեզ: Չէք վշտանար անշուշտ՝ զայն չհրատարակելուս:

.. Ս[կրտիշ] Նահապետեանի կուրծքի հիւանդութիւնը 15 տարուան պատմութիւն է: Ատկէ նեղուիլը համագոր չէ անշուշտ իր մահուան. իմ կարճ խելքովս, եթէ ինքը պատրաստականութիւն յայտնէ Երուսաղէմ գալու՝ մեծ սխալ մը պիտի ըլլայ իր փորձ գրաշարութենէն չօգտուիլնիդ. նոյն իսկ հոդ ան կրնայ նոր գրաշար հասցնել: Ըստ իս, այդի բոլոր ողջ գրաշարներուն մէջէն՝ չկայ մէկը իրեն չափ վարպետ եւ իրեն հաւասարող. իսկ արագութիւնն անմրցելի է պարզապէս: Այս յայտարարութենէս վերջ, *վրանիդ քե՛ն* պիտի ըլլայ թէ ոչ, ձեր գիտնալիք բանը:

.. Սիրելի Սրբազան հայր, Ն[որին] Ամենապատուութիւնը թէ՛ Բաբգէն Ս[րբազան]ի բերնով եւ թէ՛ իր անձնական նամակաւ խոստացած էր շնորհել 1927ի հատորիս թէ՛ *քերթումը* մը եւ թէ՛ *նախնեաց ոամկօրէնին վրայ յօդուած մը*¹⁰⁵: Բարի եղէք անպատճառ յիշեցնել իրեն՝ խոստումը, եւ խնդրել իմ կողմէ թախանձագին, որպէսզի չուշացնէ զայնս: Իսկ եթէ իր ամենավերջին լուսանկարը ընկերացնէր ձեռագիրներուն, ուրախութիւնս չափ ու սահման պիտի չունենայ:

Ձձեզ շատ սիրող ու միշտ խոնարհ՝

Թեոդիկ

Theotig, B.P. 295
Nicosia (Cyprus)

Նիկոսիա, 25. 5. [19]26

Սիրելի Սրբազան Հայր,

Ի ձեռնիմ ունիմ Մայիս 13 թուակիր նամակնիդ: Խորին շնորհակալութիւն՝ նկարիչ Պետր[ոս] Սրապեանի¹⁰⁶ աղջկան պէտք եղածը խօսելնուդ համար: Ռ'ըշափ կը ցաւիմ ուխտի եկող այդ տիկնոջ աղջկան պատահած արկածին համար. արագ ապաքինում կը մաղթէ եւոր՝ իր սրունքը 2¹/₂ տարի առաջ կտորոդ այս տողերը գրողը որ շատ լաւ գիտէ թէ ի՞նչ զարիւրելի այլ անցողական արկած է այդ. իցի՛ր թէ հետք մը չմնար եւ այնպէս մեկնէին: Սրբազան հայր, կը խնդրեմ որ դուք ձեր տեղէն առանց շարժելու նամակիկ մը փութացնէք Տիկ. Ֆնտզեանի¹⁰⁷, շնորհակալութիւններուս եւ մաղթանացս ալ արծագանգ ըլլալով, եւ խնդրելով իմ կողմէ որ վերստին գրէ իր ամուսնոյն այս մասին, պատկեր ու մահուան թուական շուտ ինձ հասցնելու համար: Ատանկ նշանաւոր հօր մը յիշատակն անշուշտ պիտի ուզէր արծարծուած տեսնել՝ որուն արժանի է արդէն հանգուցեալը (իմ երբեմնի ուսուցիչս գծագրութեան՝ ի Պերայ[երեան] Վարժարանի),¹⁰⁸ Նիկոսիոյ հասցես ալ թող տիկիկնը իմացնէ՝ ի Պոլիս՝ իր ամուսնոյն:

•• Կենսագրութիւննիդ՝ շիւքիւր¹⁰⁹ արժանացանք ունենալու: Ողջ եղէք: Ակնդէտ կը մնամ Բաբգէն Ս[րբազան]ի եւ Ն[որին] Ամենապատուութեան յօդուածոց:

•• Ներփակ նամակը յանձնէիք, որքան որ ձանձորոյթ է, Պրն. Ս[իքայել] Շամտանճեանի¹¹⁰: Պէյրութ 5 տարեցոյցս ծախեց, չվճարած՝ հող առաւ շունչը: Ձեզ տեսնեմ, Սրբազան Հայրս, յաջողցնէիք այս գործն ալ:

Ձերդ միշտ խոնարհ

Թեոդիկ

[Բացիկ]

Նիկոսիա, 9 Օգոստ. 1926

Սիրելի Սրբազան Հայր. Չրսքեանի¹¹¹ նկարին արտահանութիւնը ստացած ըլլալս գրած էի. անկէ վերջ առի նաեւ Եզնիկ Ծ. Վ. Ներկարարեանի¹¹² լուսանկարը: Խորին շնորհակալութիւն: Գէշ վարժեցուցիք զիս. աղս պակսի, մաղս տախքի¹¹³ վրանիդ կը վազեմ միշտ. «Արեւ»էն¹¹⁴ տեղեկացայ թէ Ապրիլ ...ին արկածամահ է եղեր Երուսաղէմի մօտերը նշ[անաւոր] հնախոյզ եւ պաղեստինապատում Հ. Գոտանս Օրֆալի (=Ուրֆալեան) փրանչիսկեանը¹¹⁵: Ձեր ծանօթներուն շրջանակը շատ լայն է. սրտը ալ պատկերը ճարէիք տարեցոյցիս համար ու ազատէիք... ձեռքես, մահուանը թուականին հետ: Գործս շոգեպինդ կ'ընթանայ. խճանկարին դրոշմեալ օրինակը ստացայ անցեալ շաբթու. հիանալի՛. originalէն¹¹⁶ յաջող: Եթէ 2 օրինակ ըլլար, մին ձեզի պիտի ուղարկէի: Գրասեղանիս վրայ դրեր եմ որ սիրտս բացուի: (Ա՛յնքան գոցուած է որ սիրտս՝ տա անմատեան եւ հայագուրկ միջավայրիս

մէջ: Հակառակ որբերով շրջապատուած ըլլալու՝ յախտեմապէս մինակ կ'զգամ ինքզինքս անդրէն[]: Ձերդ յար յարգալիք՝

Թեոդիկ

[Բացիկ]

Նիկոսիա, 6 Մեպտ. 1926

Սիրելի Սրբազան Հայր. – Ի ձեռին ունիմ Ձեր 28 Օգս. բուսկիրը՝ Մամբրէ Եպսկ.ի¹¹⁷ կենսագրութեան հետ: Շատ շնորհակալ եմ: 1908ի հատորիս մէջ զինք համառօտակի կենսագրած ըլլալով, կը տեսնեմ թէ «Վարդէս» անուամբ գիրք մըն ալ համած է. ստո՞յգ է: Յետոյ Ջուղայեցիի կրօնաբերքին¹¹⁸ աշխատակցա՞ծ է. եւ, մահուանը շաբթուն՝ Կաթողիկոսէն Արքութեան տիտղոս շնորհուա՞ծ է իրեն: Այժմէն կ'սպասեմ Պետր[ոս] Աղամեանէ¹¹⁹ նկարուած իր պատկերին, նաեւ Խրիմեան Հայրիկի անտիպին: Տղուն երբ շաբար խոստանան՝ շեն յետածգեր: Եւ իր 50էն վերջ, ամէն մարդ քիչ շատ կը մանկանայ արդէն, մանաւանդ ինձ մման անհամբեր մը: Որպէս զի Մամբրէ Ս[րբազան]ի նկարչական տաղանդին մասին գաղափար մըն ալ տուած ըլլանք մեր ընթերցողներուն, լաւ չըլլա՞ր որ ձեր ընտրութեամբ կրօնական խղաներկի մը reproductionն ալ ունենամ: Մի՛ մտահոգուիք Պրայսի¹²⁰ նամակին ազատաշունչ տողերուն համար. նոյնութեամբ ընդօրինակելիք ու դրկելիք ժամ առաջ¹²¹: «Պիտի ուզէի՞ք Խ[րիմեան] Հայրիկէն նոր անտիպ մը» տողերնիդ ինձ կը յիշեցնէ հայկ[ական] առածը. «Հարս, հաց կ'ուտե՞ս»: – Հայր Օրֆալիի լուսանկարին կը մնամ ակնդէտ, զի սկսած եմ մաքուրի դնել մահագրութիւնս¹²²: Ձերդ անայայտ սիրով՝

Թեոդիկ

Ֆոգլեանէն ձայն-ձուն չելաւ:

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ¹²³

ՆԻԿՈՍԻԱ (Կիպրոս)

19 Հոկտեմբեր 1926

Գերաշնորհ

Տ. Մեսրոպ Եպսկ. Նշանեան

Երուսաղէմ

Ամենա...սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ Մեպտ. 22 բուսկիր քարդս: Անցեալ շաբթու շնորհակալութեամբ ստացայ վանուցղ տպարանին արմաղանը, 27ի օրացոյցը: Կենդանակերպներու պատկերներէն կարի՞ծն ու խեցգետինը բառեր էին այս տարի իրենց սեփական բոյներուն մէջ: – Իմ կողմէս կը խնդրեմ որ բարգման ըլլայիք շնորհակալու զգացմանցս՝ Ս[րբազան] Պատրիարք Հօր մօտ, «Դրուագներ Մանուկ Յիսուսի Կեանքէն» նուէր-հատորին համար, զոր 6 ամիս առաջ ստացած էի, բայց անվերջանալի գիրերս արգելք էին եղած՝ այս տարրական պարտականութեանս կատարումին: Հիմա որ «բուղթէ 21րդ գաւակ»ս¹²⁴ կաթէն կտրած եմ, սկսայ հաճոյքով ընթերնուլ մարիմորդոյն մանկութիւնը,

մտովի փոխադրուելով ի Ս[ուրբ] Երկիր: Մե՛ղք որ հակառակ բողոքին բանձ-
րութեան ու ողորկութեան, «չամուռ»¹²⁵ տալագրութիւն մը դուրս է եկած, եւ
ոսկեգօծ կողքն այժմէն ժանգոտած է: Ո՛րքան պէտք ունիք հմուտ գրաշա-
րապետի մը, զոր նորէն Պոլսէն պիտի կրնաք ճարել՝ Արշամի ջանքերով:

.. 1927ի հատորիս աշխատութիւններն ամբոկած, իբրե՛ւ թէ կը հանգչիմ
հիմա, մինչ նո՛ր սկիզբ տուած եմ ծանձրալի քղբակցութեանց՝ որոնց մէջ
մտերմիկ տողեր չեն որ պիտի սպողին, այլ խնդրանք եւ մատուցում: Երո-
պական ազգերէն ո՞ր հեղինակ հայ հեղինակին պէս ստիպուած է ի՛նք ըլլալ
իր խոհանոցին մատակարար, խահամոք, սպասեակ, հիւրամեծար ու հաշ-
ուակալ, տաճիկ բացատրութեամբ՝ «թե՛նճիրտէ բիշիրիա՛լ գաբադրնտա կէ-
յէն»¹²⁶, ինչ որ հերոսութեան համագօր բան մըն է: Ահա՛ այդ եփած խորտի-
կէ՛ս է որ 28 պնակ Փարիզի խոհանոցէս պիտի ստանաք, ազնութիւնն ունե-
նալով Սաղիմացի անօրիններ հրաւիրելու, որ ճաշեն անկէ, ու ցնծան: Պարզ
խօսքով, 14 ծրար պիտի հասնին ձեզի, իւրաքանչիւրին մէջ 2ական գիրք: Կը
հաճիք անշուշտ օրինակ մը ձեզի վար դնել, եւ Ս[րբազան] Պատրիարք Հօր
ու Բաբգէն Ս[րբազան]ի մի մի օրինակ ընծայել: Սրբազան Հայր, իբրեւ թէ
տարուոյս սկիզբէն ի վեր ձեզի առթած ծանձրոյթներս բաւ չըլլային, ահա՛ նոր
տարապարհա՛կ մըն ալ ձեզ ուսելու հարկին մէջ կը գտնուիմ անդրէն: Տեսէք
ո՞րքան չարաչար կը գործածեմ իս սիրելիդ: Տէրը վարձահատոյց ընէ Ձեզ:–
Իբրեւ հայրենակից, ըսեմ վիճակս, այն յոյսով որ քերես ուզէք կրկնապատ-
կել եռանդնիդ. – բողոքի ու տալագրութեան անօրինակ սղութիւն եւ ֆր[անք]ի
բաւալզոր անկում նոր փոքորիկներ յարուցին ա՛րդէն համեստ պիտոճէիս մէջ,
եւ հիմա կը հեծեմ ծանրածանր պարտուց տակ: Չէ՞ կարելի Երուսաղէմէն
դուրս ալ, շրջակաները տարածել ձեր ցանցը՝ Տարեցոյցիս ventehi¹²⁷ համար
նոր տեղեր ճարելու համար: Շնորհապարտ պիտի կացուցած ըլլաք զիս, եթէ
նոր ապսպրանք ընելու պատեհութիւն ստեղծէք: Յառաջ Աստուած ամենուն
քով կրնամ ճերմակերես ելլել՝ հատորիս ճոխութեամբն ու շքեղութեամբը:

.. Պատկերահան Սրապեանի մասին՝ իր աղջկան մօտ Ձեր բարեխօսու-
թիւնը դեռ արդիւնք մը չտուաւ: Տիկ. Ֆնտզեան Պոլիս մեկնեցաւ ու մոռցաւ իր
խոստումը: Հասցենին ալ չեմ գիտեր, ծանօթութիւն ալ չունիմ հետերնին: Ձեր
վեղարին շուքը բաւ է՝ զիրենք դարձի բերելու համար շուտով: Աչքս բանամ
գոցեմ՝ տարին կը լրանայ, եւ 1928իս պատրաստութեան անձուկովը կը գրաւ-
ուիմ նորէն: Ո՛րքան ուրախ պիտի ըլլայի, եթէ այժմէն նամակ մը փակցնէիք
իրենց, խնդրելով իմ կողմէս, որ հայքայքեն հանգուցեալին պատկերը, մահ-
ուան թուականը, կենսագրութիւնը, նաեւ իր գործերէն մէկ քանիներուն
reproductionը: Կու տաք նաեւ իմ հասցէս: Վերջին նամակնուդ մէջ կ'ըսէիք թէ
1927ի եւ 1928ի հատորներուս համար լիովի արժեցուցած էիք ձեր աշխա-
տակցութիւնը: Այս ալ երբ ընէք, գործն իր լրման կը հասնի: Շնո՛րհ...:

Ձերդ անայլալ սիրով՝

Թեղիկ

Յ.Գ. – Ներփակը կը հաճի՞ք Բաբգէն Ս[րբազան]ի յանձնել: Նոյն

Théotig, B.P. 295
Nicosia (Cyprus)

Նիկոսիա, 20 Դեկտ. 1926

Սիրելիդ իմ Սրբազան Հայր,

Նոյ. 1 թուակիրիդ ա՛յսքան ուշ պատասխանելուս՝ ներողամիտ կ'ըլլաս անշուշտ: Տարեկան հաշիւներ ժամանակս գողցան ամբողջովին: Առի օրացոյցդ ալ շնորհ[ակալութիւն]:

Չե՞ս բեր, Ա[րտաշէս] Ֆնտգեանի գրեցի այս ժամանակամիջոցին եւ նպաստաւոր պատասխան ալ ստացայ: Ամփոփ մէկ կենսագրութիւնն էր ըրեր իր աներիօր՝ «Միսիւ Բիւռ»ի¹²⁸, նօթերը քաղելով իր գոքանշ-մօրմէն: Ու դեռ կը խոստանար դրկել նոյն պատկերները եւն. վստահելով այս քանը հանգուցելոյն մանչ-զակին: Շնորհակալութեան գիրս փութացուցի իրեն: Քեզի՛ կը պարտիմ միայն այս յաջողութիւնս, իմ անուշիկ սրբազանս, որ հիմա 1927ի հատորներուս տեղաւորման հոգովն ես գրաւուած, իբրեւ թէ ունեցած պաշտօններդ բաւ չըլլային: Չեմ գիտեր միայն թէ Նոյ. 1 թուակիրիդ տողերը «որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց»¹²⁹, նոյն ըղծանքով կ'սպասեմ... եւն. արդարացո՞ւց Տարեցոյցս, որուն սպառման համար թափած ճիգերդ եւ ունեցած անունիդ հմայքը գիտելով գիտեմ, եւ զգացածներս ալ Բաբգէն Ս[րբազան] հաղորդած էր արդէն: Ես վստահ եմ որ նոր ապսպրանք ալ բնելու առիթ պիտի ունենաս: Եթէ ինձ համար թանկագին այդ առիթը ներկայանայ քեզի, լաւ կ'ընես՝ ողղակի գրելով տպագրիչիս, Հրաչին¹³⁰ (որուն հասցեն կայ տարեցոյցիս 640րդ էջին ստորոտը):

Սրբազան Հայր, ներփակ պիտի գտնես Յորդանանի գումատր տեսարաններ: Արդեօք կարելի՞ է ունենալ նոյնին սեւ կամ սրճագոյն տպուածը: 28ի հատորիս համար անհրաժեշտ պէտք ունիմ անոր: Կը խնդրեմ որ ճար ճարակ բնես ու դրկես հատ մը, originalն ալ ինձ վերադարձնել բարեհաճելով:

Ամանորի բարեմաղթութեամբ եւ համբուրի սուրբ աջոյդ, կը մնամ մշտանոյն սիրով՝

Թէոդիկ

Յ.Գ.- Ներփակը Ս[րբազան] Պատրիարք Հօր յանձնէիր, իո քմծիծաղին ընկերանալիք նպաստաւոր պատասխանն ալ ինձ նօթեւելով¹³¹: Ի քեզ եմ յուսացեալ:

Նոյն

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Համաձայն Բորիտէն գրուած 16 Դեկտ. 1922 թուակիր նամակին ստորագրութեան, Թէոդիկի մականունն ուղիղ ձեւն է Լապճինեան: Չանագան աղբիւրներ զայն կը յիշատակեն տարբերակներով, որոնց վաւերականութիւնը առարկութեան դուռ կը բանայ: Այսպէս Միսաս Թօլեօլեան իր *Դար Մը Գրականութիւն* երկհատորեակին մէջ կը գործածէ Լապչինեան ձեւը, Գառնիկ Ստեփանեան իր *Կենսագրական Բաւարանի* Ա. հատորին մէջ տեղ կու տայ Լապճինեան ձեւին, մինչ *Հայկական*

Սովետական Հանրապետության Դ. հատորը կ'օգտագործել Լաբժինճեան տարբերակը:

² Ակնարկութիւն *Ամենուն Տարեցոյցի* հերթական համարին: Թէոդիկ եւ իր կողակիցը՝ Արշակուծի, միասնաբար, տարեգիրքը հրատարակել սկսած են 1907ին, Պոլիս: Իր հրատարակութեան 18րդ տարիէն սկսեալ, տարեգիրքը հերթաբար լոյսին եկած է Վիեննայի, Վենետիկի եւ Փարիզի հայկական տպարաններէն, քանի որ Թէոդիկ հետագած էր Պոլսէն եւ կը վարէր թափառականի կեանք:

³ *Միոն* (սկզբնապէս *Միօն*), Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան պաշտօնական հրատարակութիւնը, իբրեւ ամսաթիւր սկսած է հրատարակուիլ 1866ին, Երուսաղէմ, եւ յիսնամեայ ընդհատումէ մը ետք (1877-1927) կը շարունակէ լոյս տեսնել մինչեւ բուական: *Միոն* մէջ հրատարակուած են արժէքաւոր եկեղեցագիտական եւ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններ՝ այլաբնոյթ յօդուածներու եւ երբեմն նաեւ արժէքաւոր գրական ստեղծագործութիւններու կողքին:

⁴ Արշակուծի Թէոդիկ (Ճեզվէճեան) (1875-1922) ունեցած է յիշատակելի ազգային-հասարակական գործունէութիւն՝ իբրեւ անդամ Պոլսոյ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան եւ հիմնադիր Պոլսոյ Տիկնաց Միութեան: Իր առանձին հատորով հրատարակուած գործերն են *Ամիս Մը Ի Կիլիկիա* վաւերագրական փորձը (1910) եւ *Արդի Բարոյագիտութիւնը* դասագիրքը (1911):

⁵ Յիշեալ երկը լոյս տեսած է 1912ին «Տիպ ու Տառ» խորագրով՝ դառնալու համար հայ տպագրութեան պատմութեան վերաբերող կարեւոր աղբիւր մը:

⁶ Ըստ Տիգրան Հ. Թ. Սաալանեանցի եւ Մեսրոպ Եսայկ. Նշանեանի, տպարանին հիմնադրութեան նախաձեռնութիւնն ու պատիւը կ'երթան Ջաքարիա Վրդ. Կոփեցիի (յետագային պատրիարք): Տակաւին 1829ին, Պոլիս, ան կը ձեռնարկէ տպարանի մը համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներու եւ 1833ին կը սկսի բանեցնել տպարանը, որուն գլաններէն լոյսին կու գայ *Տետրակ Աղօրամատոյց Վասն Ջերմեանդ Աղօրասիրաց՝ Որք Անձամբ Կամ Մտօր Ներկայանան Ի Տնօրինական Տեղիսն Զրիստոսի Աստուծոյ Մերոյ* գրքոյկը (տե՛ս՝ *Պատմութիւն Երուսաղէմի*, հատոր Բ. Նշանեանի կողմէ, էջ 987-988):

⁷ Եսայի Թալասցի Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը գլխաւորած է 1864-1885 բուականներուն: Ըստ Օրմանեանի, թէեւ նկարագրով խիստ պարկեշտ եւ անբասիր, Եսայի Պատրիարքի պակսած են վարչական կարողութիւններ (տե՛ս՝ Մաղաքիա Արք. Օրմանեան, *Ազգապատում*, Գ. հատոր, մաս Բ., Բ. տպագրք., Պէյրութ, 1961, էջ 4199):

⁸ Սմբատ Վրդ. Գազազեան (1875-1935), յետագային՝ Եպիսկոպոս, եղած է Ս. Յակոբեանց տպարանի տեսուչ, ապա Երուսաղէմի Պատրիարքութեան Պոլսոյ փոխանորդ, Պոլսոյ Պատրիարքութեան փոխանորդ, եւն.:

⁹ Մաղաքիա Օրմանեան (1841-1918), հեղինակը *Ազգապատումի*, ԺԹ.-Ի. դարերու հայ եկեղեցական ղեմքերու մէջ կը գրաւէ առանձնայատուկ տեղ մը իր պատմաբանասիրական ներդրումով, խնդրաշարոյց դիրքորոշումներով եւ արեւմտահայութեան կեանքի բախտորոշ տարիներուն իբրեւ Պոլսոյ Հայոց Պատրիարք իր ազգային-եկեղեցական գործունէութեամբ (1896-1908):

Մեր տրամադրութեան ներքեւ ունինք պատճենները Թէոդիկէն Օրմանեանի ուղղուած երկու նամակներու, երկուքն ալ գրուած Տէր-Ներսէսեաններու Պոլսոյ Պահճէ-Գաբու թաղի տպարան-թղթավաճառատուն-կազմատունի պաշտօնաբողոքներուն վրայ:

Առաջինը, 19 Սեպտ. 1909 բուակիր, կ'ըսէ.

«Բարձրաշնորհ Արքայան Հայր,

խիստ ուրախ եմ որ կը հաճիր եղեր հետաքրքրուիլ «Ամենուն Տարեցոյցը» իս հրատարակութեամբը, որուն ժամանակագրական եւ գրական բաժինները աւարտած ըլլալով, պիտի սկսինք շարքու «Կրօնական» բաժինին: Ռ'բրան հետաքրքրական պիտի ըլլար Ձեր սրբազնութենէն ունենալ *անտիպ* գրութիւն մը, - գէշ 2 էջնոց, - որպէս զի անով մուտք գործէինք նոյն բաժինին: Անկողի կը նկատեմ որեւէ բերադրութիւն ընել այժմէն, վստահ ըլլալով որ գրաքննութեան ապահարկ լուծեն գերծ' խիստ շահեկան էջեր մը պիտի հաճիր արտադրել մի քանի օրէն եւ որկել Ս[իսի] Հրաշնայի [Տէր-Ներսէսեան], որուն արդէն խօսած էի այս նիւթին մասին ի մասնաւորի: Համբարելով Ձեր Ս. Աջը, կը մնամ որդիական յարգանքով
Թէոդիկ»:

Երկրորդը, 23 Սեպտ. 1911 բուսգրեալ, կ'ըսէ.

«Բարձրաշնորհ Արքայան Հայր

Պատիւ ունիմ այսօր կնոջս նոր երկասիրութենէն օրինակ մը Ձեր Ամենապատուութեան յղելու, եւ կը սիրեմ յուսալ որ պիտի հաճիր պահ մը քարոսափիլ անոր էջերուն մէջ՝ շնորհելու համար յետոյ Ձեր դատաստանը՝ անոր պատրաստութեանը մասին:

«Արդի Բարոյագիտութեան» հետ պիտի ստանաք «Աբուսահլ Հայ» Ձեր գիրքը զոր մինչեւ որ յաջողեցայ առնել Տիար Վ[ահան] Զարդարեանէ, բաւական տաղտուկ տրեցի յիշեալին՝ իմ յաճախակի երբողարձերովս, եւ կը կարծեմ թէ եթէ այդպէս չընէի՝ անկարելի պիտի ըլլար նոյն գիրքը վերստանալ:

Մտադրելով Ձեզ թաջողջ կեանք՝ յամբոյ կ'ածելու համար Ձեր բանկագին տրնութեանց արդիւնքն՝ ի պատիւ Հայ Գրականութեան, կը համբարեմ Ձեր Ս. Աջը եւ կը մնամ Ձեր Բարձր Արքայանութեան յար յարգալի
Թէոդիկ»:

¹⁰ Տես ծանօթ. 5:

¹¹ Ժամանակագիր Մատթոս Ուռհայեցիի (ԺԱ. դարու երկրորդ կէս-շուրջ 1144) *Պատմութիւնը* առաջին անգամ Երուսաղէմ հրատարակուած է 1869ին:

¹² Միքայէլ կամ Միխայիլ Ատրի (1126-1199), ատրի եկեղեցական պատմիչ եւ Յակոբիկեան Եկեղեցոյ պատրիարք 1166էն: Անոր *Ժամանակագրութիւնը* հայերէնի քարգմանուած է 1248ին Իսահակ Քահանայի եւ անոր աշակերտ Վարդան Պատմիչի կողմէ: Գործը Երուսաղէմ հրատարակուած է 1871ին:

¹³ Յովհաննէս Ե. կաթողիկոս (897էն) Դրասխանակերտցիի (մօտ 845-925) *Պատմութիւն Հայոցը* Երուսաղէմ հրատարակուած է 1843ին:

¹⁴ Պատմագիր, իմաստասէր, եկեղեցական գործիչ Վարդան Պատմիչի (Վարդան Արեւելցի) (մօտ 1198-1271) *Պատմութիւն Թաթարաց* երկը Երուսաղէմ հրատարակուած է 1870ին:

¹⁵ Մկրտիչ Վարդապետ Արծրունեանի աշխատասիրութեամբ 1859ին լոյս տեսած այս գիրքին ամբողջական խորագիրն է «Ստորագրութիւն Սրբոյ Քաղաքին Երուսաղէմի, Զննութեամբ Համառօտեալ Ի Հաննա Եւ Ի Մարինոս Պատմագրաց Ընդ Որս Եւ Յաւելեալ Բազում Բանս Հանդերձ Կարեւոր Մանօթութեամբ»:

¹⁶ Վահրամ Բարունի կամ Սեպեոնցի, հեղինակը *Օծումն Լեւոն Թագաւորի* գիրքին, ԺԳ. դարու հայ յայտնի իմաստասէր եւ պետական գործիչ է:

¹⁷ Jean Baptiste Bourguignon d'Anville (1697-1782), ֆրանսացի աշխարհագրագետ եւ քարտէզագիր:

- ¹⁸ Տեսաբան երաժիշտ, մանկավարժ եւ տպագրիչ Եղիա Տնտեսեանի (1834-1881) *Պատմութիւն Ս. Գրողը* լոյսին տրուած է 1867ին:
- ¹⁹ Յովհաննէս Զամոտճեան կամ Տէրոյենց (1801-1888) բազմաշխատ պահպանողական ու աւանդապաշտ դէմքին այս հեղինակութիւնը լոյսին եկած է 1912ին Պրուսական Յովհաննէս Տէրոյենց հեղինակային անունով:
- ²⁰ Թղթատարին:
- ²¹ Պրակը:
- ²² Յիշեալ անտիպ գործը «Տաղ Սիրոյ եւ Ուրախութեան»ն ըլլալու է, առնուած ձեռագիր «ԼԱ. Տաղարան»ի 137րդ էջէն (*Ամէնուն Տարեցոյցը*, 1914, էջ 132):
- ²³ Կարելի չեղաւ ճշդել ինքնութիւնը վիեննացի վարդապետին:
- ²⁴ Ակնարկութիւն Պոլսոյ բաղամասերէն Շիշլիի հայոց գերեզմանատան, ուր բաղուած են Պետրոս Դուրեան եւ շարք մը այլ անուանի հայեր:
- ²⁵ Տիգրան Ելքենճեանի (1866-1908) տապանագիրը, զոր շարադրած է Ինտրա (Տիրան Զրաքեան), ենթական կը ներկայացնէ որպէս ոսկեվաճառ, գերագանց հայրենագետ եւ հրապարակագիր (*Ամէնուն Տարեցոյցը*, 1912, էջ 58-59):
- ²⁶ Նմանաձոյլ:
- ²⁷ 1901ին Պոլիս հիմնուած Վ[ահրամ] եւ Հ[րաչ] Տէր-Ներսէսեաններու տպարանը, որ յետոյ պիտի բանէր Փարիզի մէջ եւ ուր Թէոդիկ պիտի հրատարակէր իր *Ամէնուն Տարեցոյցը*:
- ²⁸ Պէտք է ըլլայ Յովակիմեանը: Տէր-Ներսէսեան տպարանի հրկիզումէն ետք, Թէոդիկ իր տարեցոյցը հրատարակած է Մնքոն եւ Նորայր Յովակիմեաններու տպարանին մէջ, որ հիմնուած էր 1910ին:
- ²⁹ Լեւոն Ե.ի ձեռագրին լուսանկարը, որ Թէոդիկ լոյսին տուած է 1914ի տարեցոյցին 238-239րդ էջերով՝ Նշանեան Եպիսկոպոսի վերծանումով մէկտեղ, մաս կը կազմէ մեր տրամադրութեան ներքեւ գտնուող նիւթերուն:
- ³⁰ Խորէն Եպիսկոպոս Գալֆայեան (1832-1892), ծանօթ Նար-Պէյ գրչանունով, զբաղած է բանաստեղծութեամբ, բատերգութեամբ, բարգմանչական աշխատանքով եւ եկեղեցական-հասարակական գործունէութեամբ: Իբրեւ բարգմանիչ մասնակցած է Խրիմեան Հայրիկի Պերլին մեկնած պատուիրակութեան (1878): *Զնար Պանդխտի*-ն լոյս տեսած է 1868ին:
- ³¹ Գրամոլ:
- ³² Ծանուցումով:
- ³³ Տուեալ գրութիւնը տեղ գտած է 1914ի տարեցոյցին 377-378 էջերուն վրայ: Սաղիմական օրացոյցին 110 էջեր գրաւող յաւելումը Նշանեան յատկացուցած է տպարանին ութսունամեայ գործունէութեան՝ «Ակնարկ Մը Երուսաղէմի Ս. Յակոբեանց Տպարանին Վրայ» խորագրով: Թէոդիկ ներկայացած է իբրեւ «անուղղակի թելադրողը» Նշանեանի աշխատասիրութեան: Կը թուի թէ *Տիպ Ու Տառն* համար Թէոդիկի խնդրանքին ընդառաջելով նախնական տեղեկութիւններ ընծայելէ ետք, Նշանեան ձեռնարկած է յարաբերաբար ընդարձակ այս ուսումնասիրութեան լեցնելու համար բաց մը:
- ³⁴ Տիգրան Սաւալանեանց կամ Սաւալանեան (1821-1901) հեղինակն է գրաբար *Պատմութիւն Երուսաղէմի* ծաւալուն գործին, որ կարեւոր սկզբնաղբիւր մըն է Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան անցքերուն ուսումնասիրութեան համար: 1848ին Զմիտնիայէն յատկապէս Երուսաղէմ հրաւիրուած է պաշտօնավարելու

- իրեն դասատու: Հետզհետե գրադած է տպարանով, *Միոն* ամսագրի խմբագրութեամբ, դիւսնատումով, եւն., մինչեւ իր վերադարձը Զմիտնիա 1872ին:
- ³⁵ Գրիգոր Դարանաղցի կամ Կամախեցի (1576-1643) մատենագիրին *Ժամանակագրութիւնը* երուսաղէմ հրատարակուած է 1915ին: Կը թուի թէ Թէոդիկ չէ կրցած անոր մասին իր տարեցոյցով անդրադառնալու ծրագիրը իրականացնել... վրայ հասած ցեղասպանութեան պատճառով:
- ³⁶ Յեղասպանական տարիներուն անկարելի ըլլալով պահպանել կանոնաւոր շարունակականութիւնը իր տարեցոյցին, Թէոդիկ հերթական տարեգիրքը լոյսին պիտի թերեր 1920ին, իրեն 1916-1920 միացեալ թիւ՝ զայն նուիրելով անմախքնրաց նախնիին եւ տարագրութեան:
- ³⁷ Տիգրան Զրճեան (1861-1960), ծանօթ Չիբունի գրչանունով, եղած է մեղուաջան բանահաւար-բանասէր մը, որուն աշխատութիւններէն շատեր կը մնան անտիպ:
- ³⁸ Թաղէոս Միքրդատեանցի (1816-1873) *Համարաբար* պատկանելի աշխատութիւնը Թաղէոս Վարդապետ Աստուածատուրեան գրական անունով լոյս տեսած է Երուսաղէմ 1895ին:
- ³⁹ Արշակունիի Թէոդիկ մահացած է Լոզան, Չուիցերիա:
- ⁴⁰ Ակնարկութիւն Պէարքիշէ Փորքիմարիի (1266-1290), որ իտալացի հռչակաւոր բանաստեղծ Տանթ Ալիլիէրիի (1265-1321) ներշնչման աղբիւրն էր: Տանթ իր *Աստուածային Կատակերգութիւն* դասական գործին մէջ անմահացուցած է իր հոգին գերած իտալունիին: Հոս՝ փոխաբերաբար սիրելիս:
- ⁴¹ Ակնարկութիւն Ս. Յակոբ եկեղեցւոյ Ս. Գլխաղիք մատուոյին:
- ⁴² Գրիգոր Շիրուանցի, որ գլխաւորած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը 1715-1749 բուականներուն, իրեն եզակի եկեղեցական դէմք՝ անփոխարինելի ներդրում մը ունեցած է Պաղեստինի եւ Սուրիոյ հայապատկան-եկեղեցապատկան կալուածները պարտքերէ ձերբագատելու, այլեւ ընդարձակելու մէջ: Ժողովուրդը զինք ճանչցած է իրեն Գրիգոր Շրթալակիք Պատրիարք այն դժուարակիր շրթային համար, զոր իր վիզէն անցուցած ու կղպած, ուխտած էր չհանել մինչեւ Ս. Աբողիմ նիւրական պարտքերէ ձերբագատումը:
- ⁴³ Ակնարկութիւն բանաստեղծ եւ բանասէր Եղիշէ Պատրիարք Դուրեանի (1860-1930), որ 1909էն 1910 եղած է Պատրիարք Թուրքիոյ Հայոց, իսկ 1922էն մինչեւ մահ պաշտօնավարած է իրեն հայ պատրիարք Երուսաղէմի:
- ⁴⁴ Ակնարկութիւն Մուսաֆա Քեմալ Արաբիւրքի ազգայնական շարժումին, որուն անմիջական հետեւանքներէն եղան Զմիտնիոյ երկիզումն ու սպանդները եւ հայ մտաւորականներու, որբերու եւ այլոց հեռացումը Պոլսէն՝ խուսափելու համար հակահայ նոր խժոժութիւններէ:
- ⁴⁵ Յունական Բորձու կղզիի գիւղերէն Կասթուրիի մօտ կը կանգնի Աքիլէոնը, այն պալատը, որ շինուած էր Աստրիոյ Էլիզապէթ կայսրուհիին համար եւ զոր Դերմանիոյ Վիլիելմ Բ. կայսրը (1859-1941) գնած էր 1907ին: Աքիլէոնը եղած է տարագիր հայ որբերու համար բնակարան եւ մռայլ գոյներով յիշատակուած է ժամանակակից հայ գրողներու գործերուն մէջ:
- ⁴⁶ Ակնարկութիւն Հայ Ազգային Խնամակալութեան, որ կազմուած էր 28 Փետրուար 1919ին միաժուլումովը Պոլսոյ մէջ անջատաբար գործող Որբախնամ Ըկեբրութեան եւ Տարագրելոց Ըկեբրութեան, որպէսզի զբաղի հայ որբերու հարցերով:
- ⁴⁷ Նիր Իսթ Ռիլիֆը կամ Մերձաւոր Արեւելի Նպաստամատոյց Ըկեբրութիւնը ամերիկացիներու նախաձեռնութեամբ կազմուած է 1918ին, միաժուլումովը Հայկական եւ Սուրիական Նպաստամատոյց Մարմիններու, Միջին Արեւելի երկիրներու:

Ա. Համաշխարհային Պատերազմն տուժած կարիքաւոր բնակչութեան օգնելու նպատակով:

⁴⁸ Տե՛ս ծանօթ. 38:

⁴⁹ Մուտքի արտօնագիր ձեռք բերել:

⁵⁰ Արշակ Ալփօյանեան (1879-1962)՝ Թեոդիկի հետ այս նամակը ստորագրող պատմաբանն ու բանասէրը պիտի կոչուէր Եգիպտոսի հայոց առաջնորդարանի դիւանապետութեան պաշտօնին:

⁵¹ Շարժարարքով:

⁵² Ճանիկ Հայկ Չազըր կամ Չաքըր (1879-1955) «Վակոն-Լի» միջազգային ընկերութեան Եգիպտոսի եւ Պաղեստինի ընդհանուր տնօրէնը, 1924-1954 տարիներուն վարած է Գահիրէի Թեմական Ժողովի ատենապետութիւնը եւ պատասխանատու դիրք զբաղեցուցած է ՀԲԸՄի Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին մէջ:

⁵³ Պոլսոյ 1850ականներու լուսաւորական շարժումի փայլուն դէմքերէն Նահապետ Ռոսինեանի (1819-1876) «Կիլիկիա» անունով ծանօթ հայացումը տաղէն փոխառութիւն:

⁵⁴ Արեւրէն հարաւ-արեւմուտք, Յունաստանի գլխաւոր նաւահանգիստը:

⁵⁵ Յունաստան:

⁵⁶ Ակնարկութիւն Միջերկրականի յունական հինգ մեծ եւ բազմաթիւ փոքր կղզիներէ բաղկացած տարածութեան, որ ծանօթ է Յոնիական կղզիներ անունով եւ որոնց մաս կը կազմէր Զորֆուն, ուր Թեոդիկ կ'ընկերանար հայ որբերուն:

⁵⁷ Կարապետ Գարիկեան (1881-1925), ազգագրագէտ, բառարանագիր, պատասխանատուն Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան մատենադարանին:

⁵⁸ Ակնարկութիւն *Ամենուն Տարեցոյցի* հրատարակութեան պատճառով այն գումարին, զոր Թեոդիկ կը պարտէր Վիեննայի Մխիթարեան Հայրերուն:

⁵⁹ «Խրիմեան Կը Խօսի» խորագրով Թեոդիկի հրատարակած է նամակ մը, ուր Խրիմեան Եպիսկոպոս պատրիարքութենէ հրաժարելէն քանի մը ամիս ետք Ներսէս Պատրիարքին ուղղելով իր խօսքը կը փորձէ ցրել անհիմն կասկածներ իր իբրեւ թէ պատրիարքական արողին նկատմամբ ունեցած ձգտումներուն վերաբերեալ: Նամակին թուականն է 1874 (*Ամենուն Տարեցոյցը*, 1926, էջ 208-212):

⁶⁰ Մատթէոս Իզմիրեան (1845-1910), Պատրիարք Թուրքիոյ Հայոց (1894-1896 եւ 1908-1909) եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց յեջմիածին (1909-1910):

⁶¹ Ակնարկութիւն այն աշխատակցութեան, զոր Նշանեան քերած էր *Տիպ Ու Տաղին*:

⁶² Սիմոն Գաբամաճեան (1863-1942), բանասէր, բառարանագիր, որ 1919էն 1940 հրատարակած է *Գրականի Տարեցոյցը*:

⁶³ 1925ին Սփիւքի մէջ լոյսին կու գային զանազան տարեգիրք-տարեցոյցներ, ինչպէս՝ Պոլսոյ Ազգային Հիւանդանոցի *Ընդարձակ Տարեցոյցը*, *Եգիպտահայ Տարեցոյցը*, *Ամերիկահայ Հանրագիտակը*, *Ռումանահայ Տարեցոյցը*, *Տաքելը*, *Գրականի Տարեցոյցը*, *Կալոռօշին Տարեցոյցը*:

⁶⁴ Բաբգէն Կիլէսերեան (1868-1936), բանասէր, խմբագիր, դասատու Երուսաղէմի Ժառանգաւորացի (1924էն), Աթոռակից Կաթողիկոս (1931) Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

⁶⁵ Գրիգոր Անմահունի կամ Էօլմէզեան (1866?-1924) արքեպտով դերձակը ինքնագարգացմամբ դարձած է ուսուցիչ, իր ծննդավայր Մանիսայի մէջ 1905ին հիմնած է Հայ-Ամերիկեան Վարժարանը, զոր երկու տարի ետք բողոքով անցած է Երուսաղէմ, ընդառաջելով հոն դասաւանդելու հրաւերի մը: Հեղինակած է կարգ մը գիրքեր:

- ⁶⁶ Պաղեստինեան ծովագետնայ քաղաք, արաբերէնով՝ Եաֆա, որ 1948ին ենթարկուեցաւ իսրայէլեան գրաման եւ 1950էն սկսաւ մաս կազմել Թէլ Աւիվ-Եաֆա միացեալ քաղաքին: Յուպէ կը գտնուի հայապատկան Ս. Նիկողայոսի վանքը:
- ⁶⁷ 751ին հիմնուած եւ Երուսաղէմի հիւսիսը գտնուող պաղեստինեան քաղաք մը, որ 1948ին պիտի իյնար իսրայէլեան գրաման ներքեւ: Ռամլէ իր հիմնադրութեան բուականէն մինչեւ 1099ի Խաչակրաց արշաւանքը եղած է նահանգային մայրաքաղաք: Հոն է որ 1841ին հիմնուած է Ժառանգատրաց Վարժարանը (ապա փոխադրուած Երուսաղէմ) եւ հոն կը գտնուի հայապատկան Ս. Գեորգի վանքը:
- ⁶⁸ Անդրանիկ Ալըզպաշեան-Կարապետեան (1880-1922) շրջան մը Միացեալ Նահանգներ ուսուցչութեամբ գրադել էտը, Սորպոնի Համալսարանին մէջ հետեւած է հոգեբանութեան եւ մանկավարժութեան դասընթացներու: Ձմիւնիոյ աղէտի շրջանին, ան տեսուչն էր Մետրոպեան Ազգային Վարժարանին, երբ Քեմալ Արաբիքի զինուորները զինք ալ սպաննեցին ի շարս բազմաթիւ ուրիշներու: Կողակիցը՝ Տիգրանուհի Կարապետեան, նոյն շրջանին տեսչուհին էր Ձմիւնիոյ Հոփսիմեանց Աղջկանց Վարժարանին:
- ⁶⁹ Յանձնարարեալ:
- ⁷⁰ Աւետիս Մուրատեան (1895-?) Պոլսոյ Գեղարուեստի Ուսումնարանէն շրջանաւարտ գեղանկարիչ, որ դասատուութեան աղբներ, նկարած է յատկապէս զինուորականներու դիմանկարներ: 1921ին, սաղիմական ցուցահանդէսի ընթացքին արժանացած է առաջին մրցանակի:
- ⁷¹ Ներկամատիտով:
- ⁷² Յովհաննէս (Իւան) Ալվազովսքի (1817-1900), Թէոդոսիա քաղուած հայ աշխարհածանօթ ծովանկարիչ:
- ⁷³ Յիշեալ չափածոյ ստեղծագործութիւնը տպուած է 1926ի տարեցոյցին 328րդ էջին վրայ, պարզ նշումով մը՝ թէ ան «ձեռագիր Տաղարանի մը 8րդ յանգանդիս տաղն է»:
- ⁷⁴ Խեղճուկրակ պանդուխտի:
- ⁷⁵ Մկրտիչ Եպիսկոպոս Աղամունի (1858-1941) քանասիրական գործեր արտադրած հոգեւորականը 1905-1912 եղած է առաջնորդը Եպիսկոպոսի հայոց բնմին:
- ⁷⁶ Լորտ Մէլլըզ Ֆանտը կամ Հայ Գաղթականաց Ֆոնտը «Օսմանեան Թուրքիոյ հայկական կոտորածներու զոհերուն միութեան աջակցութիւն ընծայելու» նպատակով 1915ին հաստատուած անգլիական բարեսիրական հիմնադրամ մըն էր:
- ⁷⁷ Ծրարին:
- ⁷⁸ Բերթեհէմ կամ Բերթեհէմ, որ ծանօթ է իբրեւ ծննդավայր Յիսուսի, կը գտնուի Երուսաղէմի հարաւը: Հոն հայոց կը պատկանին բազմաթիւ վանք մը եւ Յուստինիանոս կայսեր կառուցած Ս. Մենդեան Եկեղեցոյ հիւսիսային բելը: Ուղղափառ Յոյներու եւ Կաթոլիկներու հետ հայեր եւս իրաւունք ունին Ս. Մենդեան այրին վրայ, որուն խորանին ներքեւ կը գտնուի Քրիստոսի մտորը, ըստ աւանդութեան:
- ⁷⁹ 1926ի տարեցոյցին 207րդ էջով ներկայացուած է լուսանկար մը, որուն մէջ կ'երեւին Վարազայ երբեմնի վանահայր Սահակ Վարդապետ (?) եւ Բերթեհէմի վանքի տեսուչ Խորէն Վարդապետ [Փոսթոյեան]:
- ⁸⁰ Զանգուածեղ Դաւիթի Բերդը (ծանօթ նաեւ Դաւիթի Աշտարակ անունով), կը գտնուի Երուսաղէմի արեւմտակողմը, Յուպէի դարպասին կից: Կը նշուի թէ կոնստանտնուպոլսէ կառուցուած է ԺԶ. դարուն, իսկ քառակուսի աշտարակին շինութիւնը ժամանակակից կը թուի ըլլալ յոյն պատմիչ Հերոդոտի: Ներկայիս ան վերածուած է Երուսաղէմի պատմութիւնը ներկայացնող բանգարանի:
- ⁸¹ Այս աղբիւրին մասին տեղեկութիւն ապահովելու մեր ջանքերն անցան ի գուր:

- ⁸² Դուրեան Պատրիարք 1926ի տարեցոյցին 205-206րդ էջերով տուած է երեք բարգմանածոյ քերթուած, մին Վիքրոր Հիկոյէն, իսկ մնացեալը Էմիլ Վերհարնէն:
- ⁸³ Յանձնարարեալ:
- ⁸⁴ Տպագրեալ:
- ⁸⁵ Կը խուսափինք գուշակութիւն կատարելէ ակնարկեալին ինքնութեան մասին:
- ⁸⁶ Արծակագիր Յովհաննէս Ասպետ (1874-1932), ծանօթ՝ նաեւ Օննիկ Չիֆթէ-Սարաֆ անունով, Թէոդիկի հետ գտնուած է Քորֆու եւ աշխատակցած անոր տարեցոյցին:
- ⁸⁷ Յակոբ Օշական (1883-1948), գրադատ, արծակագիր եւ մանկավարժ:
- ⁸⁸ Մեզի անծանօթ կը մնայ ինքնութիւնը ակնարկեալ Մուհամմէտին:
- ⁸⁹ Թէոդիկ 25 տարեթիւն է գրած: 1926 պէտք է կարդալ:
- ⁹⁰ Գաղափարապաշտ:
- ⁹¹ Կարապետ Եզեանց (1835-1905), պատմաբան, բանասէր, որ ռուսերէնով 1859ին հրատարակած է աւարտաճառ մը ինն Հայաստանի ներքին կենցաղին վերաբերող, իսկ 1898ին լոյսին տուած է, դարձեալ ռուսերէնով, ռաւոմասիրութիւն մը հայ ազգին հետ Պետրոս Մեծի (1672-1725) յարաբերութիւններուն մասին: Թէոդիկ իր 1927ի տարեցոյցին մէջ իսկապէս տեղ տուած է Եզեանցի նկարին, Խրիմեան Հայրիկի 1899 բուսկիր նամակին հետ (էջ 288-289):
- ⁹² Վերարտադրութիւնը:
- ⁹³ Հայկական դիցարանի մայրութեան եւ պտղաբերութեան աստուածուիին:
- ⁹⁴ Ակնարկութիւն Եզեանցի աշխատութեան (տե՛ս՝ ծանօթ. 77):
- ⁹⁵ Եղիշէ Պատրիարք Դուրեանի բանաստեղծական երկը, տպագրուած 1926ին, Երուսաղէմ:
- ⁹⁶ Պոլսոյ արուարձաններէն մին, որ յաճախ յիշատակուած է նաեւ իբրեւ Խասթէօյ:
- ⁹⁷ Պօղոս Նուպար (1851-1930), հիմնադիր ՀԲԸՄի եւ նախագահ Հայ Ազգային Պատուիրակութեան:
- ⁹⁸ Սիրունատեսութեան:
- ⁹⁹ Եռագոյն:
- ¹⁰⁰ Նշանեանի «Երուսաղէմի Հայկական Խճանկարը» յօդուածը հրատարակուած է 1927ի տարեցոյցին 399-406 էջերուն վրայ:
- ¹⁰¹ Բնագրէն դուրս, իբր «անջատակի» ներդիր:
- ¹⁰² Փայլուն կամ կաւճապատ բողոք:
- ¹⁰³ Լեղի, դառնահամ:
- ¹⁰⁴ Տե՛ս՝ Յովսէփ Տէր-Վարդանեան, «Հայ Պատմական Նշմարներ» (*Ամէնուն Տարեցոյցը*, 1922, էջ 224-228):
- ¹⁰⁵ «Ակնարկ Մը Հին Հայ Բարբառներու Գոյութեան Վրայ» (*Ամէնուն Տարեցոյցը*, 1927, էջ 549-553):
- ¹⁰⁶ Գեղանկարիչ Պետրոս Սրապեան (1833-1898) եղած է նկարչութեան եւ գծագրութեան ուսուցիչ Պոլսոյ Պէրպէրեան Վարժարանին մէջ: Նկարազարդած է Պալեաններու կառուցած պալատները: Խրիմեան Կաթողիկոսի հրաւերով Էջմիածին անցուցած երեք տարիներու ընթացքին զարդանկարած է վեհարանն ու բանգարանը: Մահացած է Սոֆիա, Պուլկարիա:
- ¹⁰⁷ Տիկին Ա[րտաշէս] Ֆնտզեան ղուստրն է նկարիչ Պետրոս Սրապեանի եւ կողակիցը բանասէր Գառնիկ Ֆնտզեանի եղբօր՝ Արտաշէսի: Սրապեան «Հայուիին» կոչուող իր իւղանկարին մէջ պատկերած է իր տասներեքամեայ ղուստրը (տեսնել՝ Թէոդիկի 1928ի տարեցոյցին 529րդ էջը):

¹⁰⁸ Ռեբեոս Պերպերեան իր մականունով ծանօթ վարժարանը Պոլսոյ Գատը Գիւղ արուարձանին մէջ հիմնած է 1876ին: Յեղասպանական տարիներուն փակ մնալէ ետք, վարժարանը մինչեւ 1924 շարունակել է գործել Պոլսոյ մէջ, այնուհետեւ տասը լրացուցիչ տարիներ ուսում ջամբելու համար Գահիրէ:

¹⁰⁹ Շնորհակալութիւն:

¹¹⁰ Միքայէլ Շամտանճեան (1874-1926), Եղեռնէն վերապրած եւ Լիբանան մահացած խմբագիր եւ քարգմանիչ:

¹¹¹ Խօսքը կը վերաբերի Տիրան Չրաքեանի (Ինտրա), սակայն դժուար է հաստատապէս ըսել թէ ո՞րն է խնդրոյ առարկայ նկարը: 1927ի տարեցոյցն ունի «Վայրանկար Տիրանի Չրաքեանի» խորագրով լուսանկար մը էջ 402ի վրայ: Պիտի արժէ նշել թէ Թէոդիկ հրատարակած է նաեւ Ինտրայի «Վերջալոյսն Ի Մարմարա» գործը, Մեսրոպ Եպս. Նշանեանի բացատրողականով, 1928ի տարեցոյցին մէջ, էջ 533:

¹¹² Եզնիկ Մ. Վրդ. Ներկարարեան (1872-1927) մոկացի հոգեւորականը ի շարս զանազան պաշտօններու՝ 1909ին վարած է Աղթամարի Կաթողիկոսութեան Տեղապահութիւնը, 1914ին եղած է Առաջնորդական Փոխանորդ Վանի, ուր մասնակցած է ապրիլեան ինքնապաշտպանական կռիւներուն, ապա Կովկասի մէջ շուրջ երեք տարի ծառայած է Նիր Իսր Ռիլիֆին, եւն. (*Ամէնուն Տարեցոյցը*, 1927, էջ 623-624):

¹¹³ Անգործածելի դառնայ:

¹¹⁴ *Արեւ* օրաթերթ, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Գահիրէի պաշտօնաբերքը, որ լոյս կը տեսնէ 1915էն ի վեր:

¹¹⁵ Gaudentius Orfali (Թէոդիկի մօտ՝ Gaudence) հնազեւոր 1889ին ծնած է Նազարէր (Գալիլիա) կաթողիկ եղեսպախու մը եւ կաթողիկ արարութիւի մը ընտանիքին մէջ: 19 Մարտ 1909ին յարած է Ֆրանչիսկեան Կրօնատրոներու Ուխտին: 1924ին իր ջանքերով վերակազմակերպուած է Երուսաղէմի Ֆրանչիսկեան Թանգարանը: 1925ին ընտրուած է նախագահ Արեւելեան Հնախօսական Ընկերութեան: Մահկանացուն կնքած է 20 Ապրիլ 1926ին, ետին բողոքով հրատարակուած եւ անտիպ աշխատութիւններ: Թէոդիկ, շատ հաւանաբար Նշանեան Եպիսկոպոսէն ստացած ըլլալով, Օրֆալի-Ուրֆալեանի մահախօսականին մէջ ընդգրկած է հատուածներ 1924ին Դուրեան Պատրիարքին ուղղուած նամակէ մը, ուր հանգուցեալը կը ներկայանայ «սիրելի Հայաստանի» մշտնջենատրմամբ շահագրգիռ անձ, որ կ'ուզէ ի միջի այլոց Հռոմի Պապին հոգածութեան առարկայ դարձնել հայ որբերը «ղիւրաղէպ միջավայրի մը մէջ» խմբելու եւ կազմակերպելու անհրաժեշտութիւնը:

¹¹⁶ Բնօրինակէն:

¹¹⁷ Մամբրէ Եպս. Մարկոսեան (ծն. 1835) մահացած է 12 Յունուար 1907ին, առանց ստացած ըլլալու Խրիմեան կաթողիկոսի կոնդակը, որ արքութեան տիտղոս կը շնորհէր իրեն (Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, *Ազգապատում*, Գ. հատոր, Գ. մաս, Բ. տպգր., Պէյրութ, 1961, սիւնակ 5237-5274): Նշանեան Թէոդիկի 1928ի տարեցոյցին մէջ «Նկարիչ Սրբազանը» խորագրով գրութեամբ մը անդրադարձած է անոր գեղանկարչական վաստակին (էջ 517-526):

¹¹⁸ Թորոս Քահանայ Զուղայեցիի (Թէոդոր Իսահակ) կամ Թորոս Տէր-Սահակեանի *Եկեղեցի Հայաստանեայց* կրօնական-աստուածաբանական երկշարաբաբերքը, որ 1887-1889 Պոլիս լոյս տեսնելէ ետք շարունակուած է «Հայ Եկեղեցի» անունով, իբրեւ ամսաթերթ, Մանչեսթըր, Անգլիա, 1900-1901 տարիներուն:

¹¹⁹ Պետրոս Աղամեան (1849-1891), դերասան, որ նաեւ գրադած է գրականութեամբ ու դիմանկարչութեամբ: Կը բուի թէ յիշեալ պատկերը «Պետրոս Աղամեան (Քորրատոյի Դերով) մակագրութեամբ հրատարակուածն է 1927ի տարեցոյցին 424րդ էջով:

¹²⁰ Եւջմա Պրայս (1838-1922), անգլիացի դիւանագէտ եւ պատմաբան, որ ճանչցուած է իբրեւ հայ ժողովուրդի բարեկամ եւ համաշխարհային Ա. Պատերազմի տարիներուն փորձած է օգտակար ըլլալ հայոց եւ հայկական դատին:

¹²¹ Հաւանաբար ակնարկութիւն Պրայսի ամուսնութեան առիթով Խրիմեան Հայրիկի շնորհատրական գիրին, որ լոյս տեսած է 1928ի տարեցոյցին մէջ, էջ 306:

¹²² Իմա՝ տարեցոյցին մահագրութիւններու բաժինը:

¹²³ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովին որոշումով 2005ին հայ պատանիներու ուսում ջամբելէ դադրած այս հաստատութիւնը Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեան բարերարներու կտակով հիմնուած էր 1924ին: Հակառակ անոր որ Թեոդիկ շատ գոհ չէր իր պաշտօնավարութենէն, կ'ըսէ. «...Կիպրոսի մէջ, մխիթարութիւնն ունեցայ տեսնելու հայուն դարաւոր երագին մէկ փայլուն երեսը, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: Հոն ապաստանած, իբր հայու տունիս մէջ, համախմբուած տեսայ շուրջս հարիւրաւոր երկսեռ որբեր՝ այլ եւս անբոյք եւ ուսումնատենչ. ուստի արծարծեցաւ մարած եռանդս» (*Ամենուն Տարեցոյցը*, 1928, էջ 531):

¹²⁴ Ակնարկութիւն 1927ի տարեցոյցին:

¹²⁵ Ցեխտո:

¹²⁶ Սանին մէջ եփել, կափարիչին մէջ ուտել: Այլ խօսքով՝ ընկալեալ սովորութիւններէն կամ ընդունուած կարգերէն տարբեր եղանակով, բոշայի նման վարուիլ:

¹²⁷ Վաճառման:

¹²⁸ Պետրոս Սրապեանի մասին այս գրութեան համար տես՝ *Ամենուն Տարեցոյցը*, 1928, էջ 528-533:

¹²⁹ Փոխառութիւն Սաղմոսէն (ԽԱ. 2):

¹³⁰ Հրաչ կամ Հրաչեայ Տէր-Ներսէսեան, Փարիզի «Մասիս» տպարանատան տէրը:

¹³¹ Ինձի համար գրառելով:

THEOTIG, THE FATHER OF THE "PAPER CHILDREN"

(Summary)

VACHE GHAZARIAN

Theotig (1873-1928) is one of the very few renowned scholars that survived the Armenian Genocide. His scholarly reputation mainly evolves around two works: *Hushartsan Abril Dasnemegi* (Monument Of April 11), which is a collection of biographies of Armenian scholars, cultural figures, intellectuals and clerics who were massacred during the Armenian Genocide, and the 23 volumes of *Amenun Daretsuytse* (Everyone's Diary), which were published intermittently in Constantinople (1907-1920), Venice (1921-1926), and Paris (1927-1928). These volumes are considered to be primary sources of Armenology.

Vache Ghazarian publishes 24 letters of Theotig addressed to Father Mesrob Neshanian of Jerusalem (1872-1944), between October 1/14, 1911 and December 20, 1926.

These letters throw new light on the process of compiling the volumes of Diaries at a time when communication was not as easy as it is today. The letters uncover Theotig soliciting articles, even suggesting what to write about. They unfold aspects of the financial hardships and marketing difficulties of these volumes. The letters put in the limelight the sensitive Theotig, his human relationships and the grief he feels on the loss of his wife, who worked with him in the preparation of these diaries.